

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

16821

Մ. ՇՈՒԼՄԱՆ

ՀԱՄԱԿԱ [Բ]
XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ԱԶԳԱՑԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

15.07.2013

323.1(47)
Շ-85

26 SEP 2006
15 JAN 2010

Մ. ՇՈՒԼՄԱՆ

ՀԱՄԿԿ (Բ) XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

1107
33196

Թարգմ. Վ. Բ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ 1931

16821

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1657
ԳՐԱՌԵՊ. 6430 (Բ)
ՊԱՏՎԵՐ 2826
ՏԻՐԱԺ 4000

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սղպային հարցը առանձին կետ չեր Համկկ(բ) 16-րդ համաձուամարի օրակարգում, բայց և այնպես նա նկատելի տեղ գրավեց համաձուամարի աշխատանքներում. այս հարցին մեծ ուշադրություն նվիրեց ընկ. Ստալինը կենտկոմի քաղհաչվետվության մեջ, իսկ համագումարի բանաձևում մտցվեցին մի չարք կետեր՝ դեկավարող ցուցմունքներով, մեր աղգային քաղաքականության բնագավառի վերաբերմամբ:

Բայց նախքան խոսելը այն մասին, թե ինչպես են լինի ղրվում ազգային քաղաքականության հարցերը համաձուամարում, անհրաժեշտ և համառոտ կերպով դանդ առնել մեր կուսակցության ազգային քաղաքականության էության, այդ քաղաքականության հիմնական սկղբունքների վրա:

1. *Կուսակցությունը պնդում է.*

«Կապիտալիզմի դրոհ չի կարելի վռչնչացնել ազգային (կամ ընդհանրապես բաղաքական) ճնշումը: Դրա համար անհրաժեշտ է վռչնչացնել դասակարգերը, այսինքն մատնել սոցիալիզմ» (Լենին*):

«Իմպերիալիզմը (կապիտալիզմի բարձրագույն ձևը) չի կարող դադարել ունենալ առանց քաղաքա-

*) Լենին, Ճերկերի ժողովածու, հատ. XIX, առաջին հրատ. էջ 170.

դատապրոմը կալվածատերերի և կապիտալիստների ձեռից:

Կոմունիստական կուսակցությունների համար պրոլետարական հեղափոխության չահերը վճռական դեր են խաղում ազգային մոմենտների վերաբերմամբ: Իսկ ընդհակառակը բուրժուական, մանր-բուրժուական քաղաքագետների, իդեոլոգների և կուսակցություններ համար՝ «ազգայինը բարձր է դասակարգայինից»: Նման հայացքներ քարոզելով նրանք աշխատում են խանգարել պրոլետարիատին դիտակցելու իր ընտերնացիոնալ դասակարգային չահերը, միջազգային պրոլետարական համերաշխության անհրաժեշտությունը: Միաժամանակ նման հայացքները այն մասին, թե դասակարգային մոմենտը յերկրորդական դեր է կատարում ազգային մոմենտի նկատմամբ, վորոնք ազգային մոմենտն ավելի բարձր են դասում դասակարգայինից, դրդում են բանվորներին և աուհասարակ աշխատավորներին հրաժարվել դասակարգային պայքարից, հաստատել դասակարգային խաղաղություն և համագործակցություն իրենց չահագործողների հետ՝ հանուն ինչ վոր «համազգային» չահերի, ջլատում են բանվորների ուժը և յենթարկում նրանց բուրժուազիայի ազդեցությանը:

Հանուն «ազգայինն ավելի բարձր դասակարգայինից» լոզունգի սոցիալ-դեմոկրատները (մենշևիկները) բոլոր յերկրներում կոչ էին անում ժողովրդին պաշտպանել իրենց կապիտալիստական հայրենիքը: Հանուն նույն այդ լոզունգի դերմանական և այլ սոցիալ-դեմոկրատները կոչ են անում բանվորներին գործադուլ չանել և համաձայնվել իրենց աշխատավարձի կրճատմանը:

4. Համաշխարհային պրոլետարական հեղափոխության չահերը պահանջում են բանվորների միջազգային միություն, իմպերիալիստական պետությունների պրոլետարիատի դաշինքը պատերազմին և կիսատ-պատերազմին յերկրների ճնշված աշխատավորների հետ:

> «Կապիտալը միջազգային ուժ է: Նրան հաղթելու համար հարկավոր է բանվորների միջազգային դաշինք, նրանց միջազգային յեղբայրությունը:
>
> Մենք հավատացրել ենք ազգամիջյան թշնամության, ազգային հակամարտությունների, ազգային կղզիացմանը: Մենք միջազգայնականներ ենք, ինտերնացիոնալիստներ» (Լենին):

Ազգային կոմունիստական կուսակցությունների ինտերնացիոնալիզմից բնավ չի բղխում արհամարհական վերաբերմունք դեպի ազգային առանձնահատկությունները, դեպի ազգային հարցը: Ընդհակառակը, պրոլետարական հեղափոխության չահերը պահանջում են մեզանից վերացնել ազգամիջյան թշնամության և զանազան ժողովուրդների աշխատավորների միջև փոխադարձ անվստահության բոլոր արտահայտությունները:

5. Ժողովրդների թշնամությունը, նրանց հարաբերությունների մեջ փոխադարձ անվստահությունը ուղղակի հետևանք են ազգային ճնշման իմպերիալիստական քաղաքականության: Ցարական Ռուսաստանում, որինակ, ժողովուրդները բաժանված էին լիա-

կատար իրավահավասարության, վոչ լիակատար իրավատերերի և իրավազուրկների, այնտեղ մի ժողովուրդ զբաղվում եր մյուսի դեմ՝ բոլոր ազգությունների աշխատավորների հեղափոխական միասնական ճակատը ջախջախելու նպատակով: Մեզ ժառանգություն մնացած ազգամիջյան թշնամությունը վերացնելու համար հարկավոր եր առաջ վոչնչացնել ազգային ընդհանուրը և հաստատել ազգերի վոչ միայն ձևական, այլև փաստական իրավահավասարություն:

6. Ազգերի իրավահավասարությունը ճանաչվելուց բղխում և ազգերի ինքնորոշման ճանաչումը, այսինքն յուրաքանչյուր ազգի իրավունքը ըստ իր հայեցողության վորոշելու իր պետական կարգի և պետական պատկանելության հարցը: Ճանաչել ազգերի ինքնորոշումը նշանակում է ճանաչել նրա իրավունքը պետական բաժանման:

Ահա թե ինչու Համկոմկուսի (բ) ծրագիրն ասում է.

> «Նպատակ ունենալով վերացնել ճնշված յերկրների աշխատավորների անհավասարությունը դեպի այդ յերկրները ճնշող պետությունների պրոլետարիատը, անհրաժեշտ է վոչնչացնել վորևիցե ազգային խմբի բոլոր և ամեն տեսակի արտոնություններն, հաստատել ազգերի լիակատար իրավահավասարություն, ճանաչել գաղութների և իրավահավասար ազգերի իրավունքը պետական բաժանման»:

7. Ազգերի բաժանման իրավունքի ճանաչումը չի նշանակում ճանաչել բաժանումը նպատակահարմար բոլոր դեպքերում:

«Այդ իրավունքի ճանաչումը բնավ չի բացառում վո՛չ պրոպագանդը, վո՛չ ագիտացիան բաժանման դեմ, վոչ էլ բուրժուական նացիոնալիզմի մերկացումը» (Լենին):

Շահումյանին ուղղած նամակում Լենինը գրում եր*):

> «Մենք կողմնակից ենք ինքնավարության բոլոր մասերի համար, մենք կողմնակից ենք բաժանման իրավունքի (բայց վոչ բոլորի բաժանման!)... Բաժանումը յերբեք մեր ծրագիրը չի: Մենք բնավ չենք քարոզում բաժանումը: Ընդհանրապես մենք դեմ ենք բաժանման, բայց պաշտպանում ենք բաժանման իրավունքը՝ նկատի ունենալով ահ-հարյուրակային վելիկոռուսական նացիոնալիզմը, վորն այնքան փչացրել և ազգային համակեցության գործը,—վորովհետև յերբեմն ավելի սերտ կապ և լինում ազատ բաժանումից հետո !!!»:

Լենինը դեմ եր ազգերի բռնի միացման, սակայն կողմնակից եր կամավոր միացման—նրանց ինքնորոշման հիման վրա: Նա նպատակահարմար չեր գտնում խոշոր պետությունների մանրացումը, վորովհետև դա խանգարում և պրոլետարիատի պայքարին բուրժուազիայի դեմ, խանգարում և յերկրի տնտեսական աճմանը: Բաժանման մեջ նա վորոշ դեպքերում տեսնում և միացման ուղին:

---

*) Լենին, Յերկերի ժողովածու, հատ. XX, լացուցիչ առաջին հրատարակության, մասն 1, եջ 434:

«Միացումը բաժանման միջոցով մի ուղի չէ, որ պատմականորեն հաստատվեց մեր Հոկտեմբերյան հեղափոխության միջոցով»:

8. Ազգերի ինքնուրույն հավասարության, իրական հավասարություն հաստատելու համար կուսակցությունը անհրաժեշտ է համարում ոգնել յետամնաց ժողովուրդների տնտեսական և կուլտուրական վերելքին:

Կոմինտերնի ծրագրի պահանջներից մեկն է.

«Ամեն կերպ ոժանդակել առաջներում ճընշված «չրջաններին», «ծայրամասերին» և «գաղութներին» տնտեսական, քաղաքական և կուլտուրական աճմանը՝ նրանց սոցիալիստական վերափոխման ուղղությամբ, նպատակ ունենալով բառհղծել ամուր հիմք իրական և լիակատար ազգային հավասարության համար»:

Ահա նման քաղաքականություն է անց կացվում մեզանում՝ ԽՍՀՄ մեջ, նպաստելով ժողովուրդների խաղաղ և եղբայրական համակեցության:

Ազգային անհավասարության անչեղ և սիստեմատիկ վոչնչացումը յետամնաց ժողովուրդների տնտեսության և կուլտուրայի ուժեղ վերելքի միջոցով՝ անհրաժեշտ է վորպեսզի այդ ժողովուրդները ներդրավվեն սոցիալիստական շինարարության մեջ: Առաջավոր ժողովուրդների պրոլետարիատի ոգնությամբ յետամնաց ժողովուրդները կարող են գնալ զարգացման սոցիալիստական ուղիով, խուսափելով զարգացման կապիտալիստական ուղուց:

9. Այս ամենից բղխում են կուսակցության ազգային քաղաքականության հետևյալ գործնական խընդիրները. մի շարք դաշնակից և իմքնավար հանրապետությունների, իմքնավար շրջանների կազմությունը, ազգային ռայոնների և գյուղխորհուրդների ստեղծումը ազգային փոքրամասնությունների համար, ազգաբնակության սպասարկումը մայրենի լեզվով դպրոցներով, պետական, կոոպերատիվ ապարատով, ապարատի մեջ գլխավորապես տեղական հիմնական ազգությունների աշխատավորների ներկայացուցիչների ներգրավումը (սա կոչվում է ապարատի «ազգայնացում»), ազգային կուլտուրաների զարգացումը, «ձևով ազգային, բովանդակությամբ՝ պրոլետարական»:

Սրանք են ազգային քաղաքականության հիմնական մոմենտները: Այս քաղաքականությունն անմիջապես բղխում է պրոլետարիատի միջազգային խնդիրներից, համաչխարհային պրոլետարական հեղափոխության շահերից:

I. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ XVI ՀԱՄԱԳՈՒՄՍԸ

ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան հեղափոխությունը ցայտուն որինակ տվեց այն բանի, թե ինչպես և կիրառվում գործնականում ազգերի ինքնորոշման սկզբունքը: Մենք տեսնում ենք, թե ինչպես մեզանում աստիճանաբար աճում և զարգանում ինքնավար հանրապետություններ, ինչպես և ինքնավար շրջանների թիվը, մենք տեսնում ենք, թե ինչպես այդ «բաժանումը» տանում և դեպի ՌՍՖՍՀ ժողովուրդների փոխադարձ կապի ուժեղացումը, և վոչ թե թուլացումը:

Մեր յերկրում այժմ գոյություն ունեն 7 զարգացած հանրապետություններ, 15 ինքնավար հանրապետություններ (վորոնցից 11-ը ՌՍՖՍՀ կազմում), 17 ինքնավար շրջաններ (վորոնցից 14-ը ՌՍՖՍՀ կազմում), 3 ազգային շրջաններ, տասնյակ ազգային ռայոններ և հարյուրավոր գյուղխորհուրդներ ազգային փոքրամասնությունների համար: Արտասահմանի բուրժուական մամուլը կարող է թվալ, վոր նման բաժանումները թուլացնում և խորհրդային Միությունը: Իրականում խորհրդային Միության մասերի ներքին սերտ կապը անհամեմատ ավելի ամուր է, քան վորևիցե բուրժուական պետության մեջ:

Մեր սոցիալական քաղաքականությունը ինչ վոր ժամանակվա չէ,—նա անց և կացվում գործնական կյանքում, մենք նրան հաշվի յենք առնում սոցիալիստական շինարարության գործնական աշխատանքում:

Վերցնենք այնպիսի մի փաստ, ինչպիսին և 1929 թ. վերջում Տաջիկստանի ինքնավար հանրապետության վերակազմությունը, վորպես դաշնակից հանրապետություն: Մինչ այդ, Միջին Ասիայի խորհրդային հանրապետությունների չրջանացումից հետո, Տաջիկստանը մտնում եր Ուզբեկստանի կազմի մեջ: Տաջիկ ժողովրդի պահանջով Տաջիկստանի խորհուրդների 3-ը արտակարգ համագումարն անհրաժեշտ համարեց վերակազմել Տաջիկստանը և դարձնել դաշնակից հանրապետություն: Այս վորոշումը հավանություն գտավ թե՛ Ուզբեկստանի, և թե՛ ՆՍՀՄ կենտգործկոմի կողմից: Այսպես, ներկա դեպքում կենսագործվեց ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքը:

1924 թ., Միջին Ասիայի ազգային սահմանազծումից հետո, նույնպես Ուզբեկստանը և Թուրքմենստանը բաժանվեցին ՌՍՖՍՀ կազմից և ուղղակի մտան ՆՍՀՄ մեջ՝ դաշնակից հանրապետությունների իրավունքով:

Ինչո՞ւմն է խորհրդային Միության ամրությունը: Ի՞նչն է համախմբում ՆՍՀՄ ժողովուրդները: Նրանց համախմբում է իշխանության սոցիալական միանման բնույթը—խորհրդային իշխանություն, նպատակի ընդհանրություն—սոցիալիզմի համար, ընդհանուր թշնամուն—համաշխարհային կապիտալին միացյալ ուժերով դիմադրելու անհրաժեշտությունը: Նրանց կապում են ընդհանուր չահեր՝ տնտեսական հաղաղործակցության հողի վրա, Ամբողջ Միության հա-

մար մի հանձնական տնտեսական պլանը, որը հաշվի յե առնում յուրքանչյուր հանրապետության ազգային առանձնահատկությունները և քնական հարստությունները, հնարավորություն և տալիս ոչտաչափել այդ հարստությունները՝ մեծ ոգուտ տալով թե առանձին հանրապետություններին և թե՝ ամբողջ Միությանը։ Այդ կարելի յե տեսնել տնտեսության զանազան ճյուղերում ձեռք բերված նվաճումների որինակով։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1930 թ. բայլևիկյան գարնանացանը նշանակալի դարձավ ոչ միայն ամբողջ Միության, այլև մի շարք ազգային շրջաններում ձեռք բերված՝ ել ավելի մեծ հաջողություններով։

Բամբակի ցանքի պլանները (բամբակացան գլխավոր շրջանները են Միջին Ասիան և Անդրկովկասը) մեծ չափով դերակատարվեցին։

Ուզբեկստանի կազմակերպությունների ոգևորության, ուղղված Համկկ(բ) կենտկոմին, հայտնվում է*), որ հանրապետության մեջ ցանված է 200 հազար հեկտարով ավելի, քան կոնտրակտացված եր անցյալ տարի։ Բամբակի բերքատվությունը, չնորհիվ նրբան, որ Ուզբեկստանի դաշտերում աշխատում եյին 2750 տրակտոր, գրեթե եյին ածվել հանքային պարարտանյութեր և այլն, անցյալ տարվա համեմատությամբ կբարձրանա 15 տոկոսով։ Ցևթե անցյալ տարի հանրապետության մեջ մթերված եր 543 հազար տոննն բամբակ, ապա այս տարի բերքը սպասվում է 955 հազար տոննի*)։ Կոլխոզների բամբակի ցանքսերի տարածությունը կազմում է ամբողջ հանրապետության բամբակի տարածության մեկ յերրորդը։

Տաջիկստանում հանրայնացված սեկտորում (խորհտնտեսությունները և կոլտնտեսությունները) գտնվում է բամբակի բոլոր ցանքերի 50 տոկոսը։ Կոլեկտիվացված և բոլոր տնտեսությունների 13½ տոկոսը։ Բամբակի ցանքսերը յերեք–չորս անգամ գերազանցել են նախապատերազմյան տարածությանը**)։

Թուրքմենստանում ցանքերի տարածությունը անցյալ տարվանից ավելացել է 30½ տոկոսով, (որը ըստ գալի չափով գերազանցում է ցանքերի տարածության համամիութենական աճումը)։ Կոլեկտիվացումն այնտեղ ընդգրկել է գյուղացիական բոլոր տնտեսությունների 25 տոկոսը***)։

Կազախստանում ըստ պլանի հնգամյակի վերջում լինելու յեր 160 հազար հեկտար բամբակ, իսկ այնտեղ արդեն 1930 թ. կան 154 հազար հեկտար բամբակի ցանքեր*)։

Ամբողջ Միջին Ասիայում Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի բամբակացան պլանը 1930 թ. կատարված է 111,4 տոկոսով (այսինքն պլանից 11 և մեկ չորրորդական տոկոս ավելի յե ցանված)։ Կոլխոզներն ընդգրկել են ցանքերի ամբողջ տարածության 26

*) „Известия ЦИК СССР", 19 հուլիսի 1930 թ.

*) Տվյալները վերաբերում են 1930 թվին։

**) «Պրավդա Վոստոկա», 13 հունիսի 1930 թ.

***) «Իզվեստիա», 26 հունիսի, 1930 թ.

*) Советская степь», 18 հունիսի 1930 թ. ընկ. Խալեվի զեկուցումը։

տալիսը: Նման նվաճումներ հնարավոր չէին ընդհվի մյուս խորհրդային հանրապետությունների ոգնության, ընդհվի այն բանի, որ խորհտնտեսությունների և մեքենատրակտորային կայանների տրակտորները վարեցին 415 հազար հեկտար*):

Կարելիսյում ցանքերի տարածությունն անցել է նախապատերազմյանից 56 տոկոսով: Կովերի թիվն աճնել 32 տոկոսով ավելի չե նախապատերազմյան ժամանակից**):

Համամիութենական պլանի հիման վրա՝ գյուղատնտեսության զարգացման տեսակետից խոշոր նշանակություն ունի Համամիութենական Հողժողկոմատի ստեղծումը:

ՌՍՖՍՀ հողագործության միացյալ ժողկոմատ ըստեղծելու վորոշումը ընդունվեց Համկկ(բ) կենտկոմի նոյեմբերյան պլենումի կողմից (1929 թ.) ազգային հանրապետությունների մի չարք ղեկավար կենտրոնների վորոշումների հիման վրա:

Ի՞նչը թելադրեց Համամիութենական Հողժողկոմատ կազմելու անհրաժեշտությունը: Կոլեկտիվացման զարգացումը, խորհտնտեսությունների չինարարության ծավալումը, վոր պահանջում է գյուղատնտեսական արտադրության ղեկավարության մխասնականություն, համամիութենական արտադրական կազմակերպությունների ստեղծումը (Զերնոտրեստ, Կոլխոզկենտր, Տրակտորկենտր, «Սկոտովոդ», «Ռեմգեվոդ», «Սվինովոդ» և այլն) և նրանց համամիութենական ղեկավարության, աշխատանքի համամիութենական պլանի անհրաժեշտությունը, գյուղատնտեսության համար կադրերի պատրաստությունը, (վորը վեր և առանձին յնատմնաց ազգային շրջանների ուժից), պիտական-հետազոտական աշխատանքի ծավալումը գյուղատնտեսության ասպարեզում և այլն—ահա խնդիրներ, վոր չի կարելի լուծել առանց Համամիութենական Հողժողկոմատի:

Դաշնակից հանրապետությունների Հողժողկոմատները, վորոնք առաջ աշխատում էին բոլորովին ինքնուրույն, այժմ աշխատում են կենտրոնի դիրեկտիվներով—այսինքն Միութենական Հողժողկոմատի, այնպես, ինչպես հանրապետական ԺՏԳՒ, Աշխժողկոմատները, Ֆինժողկոմատները, ԲԳՏ աշխատում են համապատասխան դաշնակից հանրապետությունների դիրեկտիվներով:

Միութենական Հողժողկոմատը իր գոյության կարճ ժամանակամիջոցում միանգամայն արդարացրեց իրեն: Շնորհիվ համամիութենական պլանի և ամբողջ Միության ոգնության ազգային հանրապետությունները առանում են իրենց գյուղատնտեսությունը զարգացնելու այնպիսի հնարավորություններ, վորոնք անմատչելի կլինեին յուրաքանչյուր առանձին հանրապետության համար, յեթե նա գործեր միայն իր սեփական ուժերով և միջոցներով:

ԱԶԳԱՑԻՆ ԾԱՑՐԱՄԱՍԵՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

Հեղափոխության 10-րդ համագումարը 1921 թ. անհրաժեշտ համարեց «ամենից առաջ պլանաչափ մըտ-

*) «Պրավդա Վոստոկա», 6 հունիսի 1930 թ.

**) «Իզվեստիա», 4 ոգոստոսի 1930 թ. «Կարելիայի ինքնավար սոցիալիստական խորհրդային հանրապետության տասնամյակի առթիվ» հոդվածը:

1003
33326

ջընել արդյունաբերության ծայրամասերում», դիտելով այդ, որպես ուղի ազգային անհավասարության վերացման՝ տնտեսական զարգացման մեջ: Կուսակցության 12–րդ համագումարը 1923 թ. խնդիր առաջադրեց ստեղծելու արդյունաբերական ոջախներ ազգային ռայոններում: 15–րդ համագումարը (1927 թ.) առաջարկեց հնգամյա պլանում «հատուկ ուշադրություն դարձնել յուրամնաց ազգային ծայրամասերի և յուրամնաց ռայոնների տնտեսական և կուլտուրական վերելքի հարցերին (ընդգծումներն իմն են—Մ. Շ.), մեկնելով այն տեսակետից, որ անհրաժեշտ է աստիճանաբար վերացնել նրանց տնտեսական և կուլտուրական յուրամնացությունը, համապատասխան կերպով նախատեսելով եկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման ավելի արագ տեմպ*) (ընդգծումը իմն է—Մ. Շ.):

Ինչպե՞ս են իրագործվում այս վորոշումները: Ի՞նչ նվաճումներ ունենք մենք նախ և առաջ ազգային հանրապետությունների ինդուստրացման բնագավառում:

Ահա մի շարք թվեր, վորոնք ցայտուն պատասխան են տալիս այդ հարցին:

Արդյունաբերության հիմնական ֆոնդերը (այսինքն կապիտալները, հաշվելով ձեռնարկությունների արժեքը իրենց սարքավորումով միասին) Ուկրաինայում, Բելոռուսիայում և Միջին Ասիայում առ 1 հոկտեմբերի 1928 թ. կազմում էին 1 միլիարդ 908 միլիոն ռուբլի. հնգամյա պլանով այդ յերկրների արդյունաբերության մեջ դրվում է 4 միլիարդ 984 միլիոն ռուբ-

*) Ռիկով և Կրժիժանովսկի, ՝ԽՍՀՄ տնտեսական շինարարության հեռանկարները: Զեկուցումներ ՀԿ(բ)Կ XV համագումարում, 1928 թ. էջ 104:

լի, այսինքն յերկու և կես անգամ ավելի, քան հնգամյակի սկզբի հիմնական ֆոնդերը: ՌՍՖՍՀ 10 ինքնավար հանրապետությունները առ 1 հոկտեմբերի 1928 թ. ունեին հիմնական կապիտալ 198,7 միլիոն ռուբլու, իսկ հնգամյակի ընթացքում այդ հանրապետությունների արդյունաբերության կապիտալ ներդրումները հասցված են 815,6 միլիոն ռուբլու. իսկ յեթե հաշվենք միայն նոր շինարարությունը, ապա այդ հանրապետությունների հիմնական ֆոնդերը կավելանան մինչև 920,5 միլիոն ռուբլի, այսինքն 4,6 անգամ: Արդյունաբերության հիմնական ֆոնդերի միջին աճումը ըստ հնգամյա պլանի՝ հնգամյակի առաջին տարվա սկզբի ֆոնդերի համեմատությամբ կազմում է ամբողջ ԽՍՀՄ համար 189 տոկոս, մինչդեռ առանձին հանրապետություններում մենք ունենք հիմնական ֆոնդերի աճման չատ ավելի չչափելի թվեր—Ղրիմում՝ 390 տոկոս, Դաղստանում՝ 400 տոկոս, Կազակստանում՝ 449 տոկոս, Կիրգիզիայում՝ 578 տոկոս, Ջուվաշիայում՝ 843 տոկոս, Բուրյաթ-Մոնղոլիայում՝ 867 տոկոս, Յակուտիայում՝ 1225 տոկոս, Բելոռուսիայում հիմնական կապիտալը մեծանում է դրեթե հինգ անգամ*):

Այստեղ մենք ունենք աճման հսկայական թվեր, վորովհետև սկզբնական թվերը յուրամնաց ազգային ռայոններում չատ փոքր էին ԱՍՖՍՀ և Միջին Ասիայում հիմնական կապիտալների աճման տոկոսը պակաս է, բայց այնուամենայնիվ դեռևս չափով ավելի

*) Национальная политика ВКП (б) в цифрах. Изд. Комакадемии, 1930 г. отдел «Промышленность».

մեծ է, քան հիմնական ֆոնդերի աճման համամիութենական տոկոսը։

Ընդհակառակը, մի շարք այլ հանրապետություններում մենք ունենք արդյունաբերության ամբողջ արտադրանքի աճման ավելի արագ տեմպ՝ համեմատած Միության ամբողջ արդյունաբերության աճման տեմպին։

Ուզբեկստանում 1928–29 թ. արդյունաբերական արտադրանքի աճումը հասավ 54,3 տոկոսի՝ Միության 23,7 տոկոսի փոխարեն*)։

Արդյունաբերության բուռն աճում մենք տեսնում ենք Կազակստանում։ Հնգամյակի վերջում արդյունաբերությունը պետք է տար 38 միլիոն ռուբլու արտադրանք, իսկ արդեն 1929–30 թ. այնտեղ արտադրանքը հասել է 49 միլիոն ռուբլու։ Արդյունաբերության ներդրումները հնգամյակի վերջում կավելանան 24 անգամ՝ հնգամյակի առաջին տարվա հանդեպ։ Արդյունաբերական արտադրանքը հնգամյակի վերջում կավելանա 15 անգամ՝ 1928–29 թ. համեմատությամբ**)։ Կազակստանում կզարգանա գունավոր մետալուրգիան, նավթարդյունաբերությունը և այլն։ Այնտեղ կառուցված է Տուրկսիբը և կկառուցվեն մի շարք այլ էներկաթուղիներ, որոնք մեծ խթան կհանդիսանան այդ երկրի տնտեսական զարգացմանը։

Ադրբեջանում կառուցված են մի շարք հիդրոկայաններ։ Ազրբեջանում կառուցված են (բացի Ազնավուրից) 10 էլեկտրակայաններ։ Գյանջայում կառուցված է տեքստիլ գործարան, կառուցվելու է մետաղագործարան։ Այդ քաղաքը կդառնա հանրապետու-

*) «Իզվեստիա», 26 հունիսի 1930 թ., ընկ. Ֆոլոմեևի հոդվածը։

**) «Революция и национальности» ժուռնալ, № 2, 1930 թ. Ռաբիկովի հոդվածը, էջ 21։

*) «Զարյա Վոստոկա», 11 հունիսի 1930 թ. ընկ. Ելիավայի զեկուցումը։

**) «Советская степь», 18 հունիսի 1930 թ. ընկ. Իսակովի զեկուցումը էներգային կոնֆերանսում։

Թյան յերկրորդ արդյունաբերական կենտրոնը Բաքվից հետո։

Մինչև Ասիայում կառուցված են և կառուցվում են տեքստիլ և մետաքսի ֆաբրիկաներ, բամբակագործիչ, ձիթհանի և քիմիական գործարաններ, բուրդի մանածագործարան Մերվում, թղթի ֆաբրիկա և բամբակագործական գյուղատնտեսական մեքենաների գործարան Տաշքենդում, էլեկտրոկայաններ և այլն։

Կիրգիզիայում կառուցված են մահուդի և մետաքսի ֆաբրիկաներ, կաշվի, բամբակագործիչ գործարաններ և սղոցագործարան, կառուցվում է շաքարի գործարան։

Բուրյատո-Մոնղոլյան հանրապետության մեջ ըստկված-է հսկա ապակեգործարանի, էլեկտրոկայանի և ավտոմատ հեռախոսակայանի կառուցումը, կառուցվում են ասբեստի և դրաֆիտի հանքեր և ձկի կոնսերվի գործարան։

Ղրիմում կառուցված և կերչի հսկա մետաղագործարանը։

Կարելիայում արդյունաբերության ամբողջ արտադրանքը վերջին չորս տարվա ընթացքում ավելացել է յոթին անգամ։ Արդյունաբերական բանվորների թիվը վերջին տասը տարվա մեջ ավելացել է տասն անգամ։ Կարելիայում բուռն թափով աճում է փայտի, թղթի և հանքային արդյունաբերությունը։ Այնտեղ կառուցված են կոնդոպոժի թղթի գործարանը և էլեկտրոկայան, մի շարք սղոցարաններ և այլն*)։

*) «Պրավդա», 4 օգոստոսի 1930 թ. «Հյուսիսական տասնամյակ» հոդվածը։

Թաթարական հանրապետության մեջ ցենզային արդյունաբերությունը տալիս է 135 միլիոն ռուբլու արտադրանք, իսկ ցարի ժամանակ Կազանի նահանգը արհեստաձորական արտադրության հետ միասին տալիս էր 19 միլիոն ռուբլու արտադրանք։ Թաթար բանվորները 1925 թ. կազմում էին արդյունաբերական բանվորների ընդհանուր թվի միայն 19,9 տոկոսը, իսկ այժմ թաթարական բանվորների թիվը հասնում է արդեն 29,8 տոկոսի*)։

Ամենուրեք արդյունաբերության աճման զուգընթաց աճում և պրոլետարիատի թիվը, այդ թվում նաև տեղական ազգությունների պատկանողները։

Որինակ Ուզբեկստանում գործարանային պրոլետարիատի թիվը 14,321-ից հասել է 19,809-ի, իսկ տեղական ազգաբնակության տեսակարար կշիռը բանվորների թվում 45,7 տոկոսից բարձրացել է 52,7 տոկոսի (1926 թվից մինչև 1929 թ. ժամանակաշրջանում)։ Դաղստանում պրոլետարիատն աճել է 2819-ից մինչև 4148, իսկ տեղական ազգաբնակության տեսակարար կշիռը գրեթե կրկնապատկվել է*)։ Կազակստանում արդյունաբերական պրոլետարիատի թիվը վերջին յերկու և կես տարվա մեջ 19,170-ից հասել է 46,194-ի, այսինքն, մոտավորապես յերկու և կես անգամ ավելացել է, սակայն բանվորների մեջ 1929-30 թ. կազակ-

*) «Պրավդա», 4 օգոստոսի 1930 թ. «Ազգային քաղաքականության հաջողությունները Թաթարստանում» հոդվածը։

*) «Национальная политика ВКП(б) в цифрах», եջ 110։

ներդը (տեղական ազգաբնակութիւնը) կազմում էին միայն 34 տոկոս*)

Առայսօրակ դեռ չի լուծված տեղական ազգութիւնների ներկայացուցիչներին արդիւնաբերական պրոլետարիատի շարքերում ներգրավելու խնդիրը: Այս բնագաւառում յեղած նվաճումները չի կարելի բավարար համարել: Ազգային հանրապետութիւնների մեծամասնութեան մեջ արդիւնաբերական բանվորների թվում գերակշռում են ռուսները, իսկ արևելյան հանրապետութիւնների մեջ ազգային պրոլետարիատը բաղկացած է գլխավորապես վոչ վորակյալ կամ քիչ վորակյալ բանվորներից: Շատ քիչ է տեղական ազգաբնակութեան պատկանող կանանց թիվը բանվորների շարքերում:

Վո՞րն է ընդհանուր յեղրակացութիւնը:

Մենք արագ տեմպով առաջ ենք շարժում ազգային հանրապետութիւնների ինդուստրացումը, ծայրամասերում ստեղծում ենք արդիւնաբերական ոջախներ, ազգային ռայոններում արդիւնաբերութիւնը զարգացնում ենք ավելի արագ տեմպով, քան ամբողջ Միութեան մեջ միասին վերցրած, հետևաբար, արդիւնաբերական զարգացման բնագավառում մենք մրտել ենք փաստական ազգային անհավասարութիւնը վերացնելու ուղին:

Այդ ուղին չի կարելի անցնել «մեկ թռիչով», այդ ուղին անխուսափելիորեն յերկար է: Վոչ բոլոր ազգային հանրապետութիւնները և մարզերը կարող կլինեն համաչափ և միահավասար կերպով արագ հասնել ՀՍՀՄ

*) «Советская степь», 9 հունիսի 1930 թ. ընկ. Գոլոշչեկինի զեկուցումը:

ՀՍՀՄ առաջավոր ազգությունների արդյունաբերութեանը, վորոնք իրենց տեղում կանգնած չեն մնում, այլ արագորեն ծավալում են նոր ֆաբրիկանների և գործարանների շինարարութիւնը. բացի դրանից յետամնաց ռայոնների ազգային հանրապետութիւնները Խորհրդային իշխանութեան որոք սկսեցին իրենց արդյունաբերական զարգացումը՝ ունենալով աննշան արդյունաբերութիւն: Սակայն կասկածից դուրս է, վոր առաջավոր և յետամնաց ռայոնների միջև արդյունաբերական զարգացման մակարդակի տարբերութիւնն աստիճանաբար կպակասի: Դրան յերաշխիք են այդ ուղղութեամբ արդեն ձեռք բերված հաջողութիւնները:

ՅԵՏԱՄՆԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Դեռ ել ավելի ապշեցուցիչ հաջողութիւններ ունենք մենք յետամնաց ռայոնների կուլտուրական վերելքի բնագավառում:

Ամենից առաջ պետք է նշել, վոր Հոկտեմբերյան հեղափոխութեան շնորհիվ տասնյակ մանր ժողովուրդներ ՀՍՀՄ մեջ առաջին անգամը ստացան իրենց այբուբենը: Մայրենի լեզվով գրականութեան ստեղծումը առաջին քայլն եր, անհրաժեշտ պայմանը այդ ժողովուրդներին կուլտուրային հաղորդակից դարձնելու համար: Խորհրդային իշխանութեան տասն և մեկ տարվա ընթացքում միայն՝ 38 նոր ժողովուրդներ առաջին անգամը ստացան տպագրական խոսք մայրենի լեզվով, մինչդեռ ցարական ռեժիմի սրով մոտ յերկու հարյուր տարվա ընթացքում մինչ 1917 թ. միայն 23 ժողովուրդներ ստացել են ազգային մամուլ:

Ներկայումս բուրժուազիայի տիրապետության բոլոր յերկրներում հաշվում են 1,700 կենդանի լեզուներ, վորոնցից միայն 102 ունեն իրենց մամուլը, կամ 6 տոկոսը, ԽՍՀՄ մեջ կան 140 կենդանի լեզուներ, վորոնցից 61 ունեն իրենց մամուլը, այսինքն 44 տոկոսը*):

Այս թվերը պայծառ դաղափար են տալիս այն հրնկայական աշխատանքի մասին, վոր կատարված է մեզանում յեւամնաց ժողովուրդների հուլտուրական մակարդակը բարձրացնելու և նրանց համար դրություն ստեղծելու բնագավառում:

Ցարական ինքնակալությունը կալվածատերերի, վաճառականների և կապիտալիստների շահի համար անց էր կացնում վոչ վելիկոռուս ժողովուրդների— այսպես կոչված «տայլազդինների» բռնի ռուսացման քաղաքականությունը, այսինքն ճգնում էր, վոր մյուս ժողովուրդները մոռանան իրենց լեզուն և կուլտուրան:

Ցարիզմը թույլ չեր տալիս: մայրենի լեզվով դպրոցներ հիմնել այլ ժողովուրդների համար: Իսկ մինչդեռ միայն մայրենի լեզվով դպրոցը կարող էր յերեխաների համար լայն ճանապարհ բաց անել դեպի կըրթությունը, դեպի կուլտուրան: Սակայն ինքնակալությունը հենց չեր ցանկանում այդ. նա չհասկըցված չեր յեւամնաց ազգությունների աշխատավորների լուսավորության մեջ: Նույնիսկ ռուսական դպրոցներ բաց չեր անում ցարական կառավարությունը արևելյան ժողովուրդների համար, պահելով նրանց տգիտության և խավարի մեջ: Զարմանալի չէ, վոր մենք ցարիզմից ժա-

*) «Журналист», № 14, 1929 թ. «Բյուլլ և Բաքու» հոդվածը, էջ 422:

ռանգություն սաացանք գրեթե գլխովին անգրագետ մի շարք ժողովուրդներ:

Խորհրդային իշխանությունը իր առաջ խնդիր է դրել բոլոր ժողովուրդները հաղորդակից դարձնելու սոցիալիստական կուլտուրայի չինարարությանը: Դրա համար անհրաժեշտ եր ամենից առաջ լայն ծավալել անգրագիտության վերացումը չափահաս ազգաբնակության մեջ, ստեղծել դպրոցների ցանց յերեխաների համար:

Մի քանի որինակներ ցույց կտան, թե ինչ նվաճումներ ունենցել ենք մենք այս բնագավառում:

Կիրգիզիայում 1914 թ. կար 70 դպրոց 4 հազար աշակերտներով, այժմ—614 դպրոց 51,600 սովորողներով. 1914 թ. դպրոցական տարիքի յերեխաներից դպրոցներում կային 4 տոկոս, այժմ—48 տոկոս*): Թուրքմենաստանում մինչև հեղափոխությունը մեկ միլիոն թուրքմեն ազգաբնակությանը ընկնում եր 4 ռուս-տեղական դպրոց 151 աշակերտներով և 389 մեքթեբներ (կրոնական դպրոց) 4689 աշակերտներով, իսկ այժմ (1929–30 թ.) կան 686 խորհրդային նախնական դպրոցներ 42 հազար աշակերտներով, մի քանի պրոֆտեխնիկական դպրոցներ 3 հազար աշակերտներով**):

Ադրբեջանում 1917 թ. միայն 9,3 տոկոսն եր դրաղետ, Խորհրդային իշխանության տասը տարվա ընթացքում դրագետների թիվը հասել է 30 տոկոսի: Այնտեղ դպրոցները ընդգրկել են դպրոցական տարիքի բոլոր յերեխաների 66 տոկոսը, իսկ Թուրքերը կազմում

*) «Իզվեստիա» 7 մայիսի 1930 թ.

**) Նույն տեղը, 26 հունիսի, 1930 թ.

են բոլոր դպրոցականների 60 տոկոսը: Մինչև պատերազմը Ադրբեջանում վոչ մի ԲՈՒՀ՝ (բարձրագույն դպրոց–հաֆալսարան) չկար, իսկ այժմ կան 7 ԲՈՒՀ–եր*):

Կազախստանում 1917 թ. 1–2 տոկոսն եր գրագետ, 1927–28 թ. 10–13 տոկոս, այժմ, հավանաբար, գրագետների թիվը հասել է 15 տոկոսի: 1915 թ. նախնական դպրոցներում կար 89,500 աշակերտ, վորից 13,000 կազակ, այսինքն կազակ աշակերտների թվի աճման տեմպը կրկնապատիկ ավելի չի աշակերտների թվի ընդհանուր աճման տեմպից**):

1920 թ. մինչև 1926 թ. վոլոստների մեջ գրագետների թիվը 3 տոկոսից բարձրացել է 25 տոկոսի, բանվորների մեջ—9,2 տոկոսից 24 տոկոսի, չերքեզների մեջ—3–ից 16 տոկոսի***):

Թաթարական հանրապետության մեջ խորհրդային իշխանության որով գրագետների տոկոսը կրկնապատկվել է:

10 տարեկանից սկսած գրագիտների տոկոսը ամբողջ ազգաբնակության կազմում՝ հասնում է.

	1926 թ.	1929 թ.	1930 թ.
ԱՍՅԽՀ	37	46	52,1
Թուրկստ. ՍՀՀ	12 5	19,4	24,5
Ուզբ. ՍՀՀ	9,9	14,2	19,4

*) «Իզվեստիա», 6 հուլիսի 1930 թ., ընկ. Մուսաբեկովի հոդվածը:

**) «Советская степь», 18 հունիսի 1930 թ. ընկ. Խայեվի զեկուցումը.

***) «Революция и национальности» ժուռնալը № 1. Թախիմբայեվիչի հոդվածը. «Ազգային փոքրամասնությունների լուսավորությունը ՌՍՖԽՀ մեջ»:

Այսպես չորս տարվա ընթացքում յերկու վերջին հանրապետությունների մեջ գրագետների տոկոսը գրեթե կրկնապատկվել է: Սա ամեն ավելի արագ տեմպ է, քան ամբողջ միության մեջ ընդհանուր առմամբ, վորտեղ գրագետների տոկոսը այս չորս տարվա մեջ 51,3–ից բարձրացել է 62,6–ի:

Բերելով այս թվերն իր զեկուցման մեջ 16–րդ համագումարում (Համկ(բ) կենտկոմի կազմակերպչական հաշվետվությունը), ընկ. Կագանովիչն ընդգծում է.

«Վորքան էլ նշանակալի լինի այդ յերկու յեւրոպական հանրապետությունների ամեն դաշնակից (Թուրքեստանում գրագետների տոկոսն ամեն է կրկնապատիկ, նույնպես աճում նաև Ուզբեկստանում), մենք ամենավճռական մի ջոցներ ձեռք պետք է առնենք վերապահություն չափով բարձրացնելու գրագիտությունն այդ հանրապետությունների մեջ»*):

Տաջիկստանում հինգ–վեց տարի առաջ թղթի վրա կար 5–10 դպրոց, իսկ այժմ կան 500 կոմպլեկտանոց ուսչին տարիճանի դպրոցներում և տասնյակ միջնակարգ դպրոցներ**):

Չնայած այս հաջողություններին յեւրոպական ժողովուրդների մեջ գրագետների թիվը դեռ շատ աննշան է: Այդ ժողովուրդները գրեթե վոչնչից սկսեցին իրենց կուլտուրական շինարարությունը մայրի՛ ի լեվով: Դրա համար դպրոցների, և սովորողների, և գրագետների թվի հարաբերական աճման արագ.

*) «Отчет ЦК XVI с'езду ВКП (Б). ГИЗ, 1930 г., стр. 129.

**) «Իզվեստիա», 26 հունիսի 1930 թ.:

Լուծյամբ հանդերձ, բացարձակ թվերը դեռևս չնչին են: Կուլտուրական զարգացման մակարդակի տեսակետից դեռ շատ մեծ է տարածությունը այդ ժողովուրդների և ռուսների, ինչպես և Խորհրդային Միության ավելի առաջավոր ժողովուրդների միջև: Սակայն այդ տարածությունը գնալով պակասում է: Սա նշանակում է, որ մենք գտնվում ենք վիճակային ազգային անհավասարությունը վերացնելու ճանապարհին նաև կուլտուրայի բնագավառում: Անհրաժեշտ է եղ ավելի արագ առաջընթաց այս ուղղությամբ:

ՆՍՀՄ կենտգործկոմի և ժողկոմխորհի վորոշումով 1930–31 թ. մեզանում մտցվում է ընդհանուր պարտադիր ուսում: Ավելի յետամնաց ժողովուրդների համար թույլ է տրվում հետաձգել մեկ–յերկու տարով այդ վորոշման դործադրումը: Պետք է մոբիլիզացիայի յենթարկել բոլոր ուժերը և միջոցները անշեղ կերպով այդ վորոշումը յետամնաց ազգային ռայոններում, վոչ մի վեպքում չձգձգելով այդ աշխատանքը:

Նախքան Հոկտեմբերյան հեղափոխությունը ՆՍՀՄ թուրք–թաթարական ժողովուրդների մեջ տիրում եր արաբական այբուբենը: Այդ այբուբենը չափազանց դժվար է, վորպ դրագիտությունն անմատչելի յեր մասսաների համար: Խորհրդային իշխանության տակ ստեղծվեց ավելի պարզ և մատչելի թուրքական նոր այբուբեն (լատինական տառերով) և այդ ոգնեց արագացնելու անդրագիտության վերացումը, ուժեղացնելու կուլտուրական հեղափոխության տեմպն Աբխազիայում: Լատինական այբուբեն ընդունեցին Խորհրդային Միության 36 ժողովուրդներ, թվով 28 միլիոն մարդ, վորոնց մեջ միջին հաշվով 10 տոկոսը դրագետ է նոր այբուբենով:

Մենք կանգ չենք առնի դրագիտության աճման վրա Խորհրդային Միության ավելի առաջավոր ժողովուրդների մեջ, վորոնք այնուամենայնիվ յետամնաց են համեմատած վելիկոռուսների հետ: Բավականանանք միայն յերեք օրինակով:

Ջուվաշիայում մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը 78 տոկոսն անդրագետ եր, իսկ այժմ այդ հանրապետությունը դտնվում է ընդհանուր պարտադիր ուսում մտցնելու նախորյակին*):

Կարելիայում նախապատերազմյան չրջանում մայրենի լեզվով վոչ մի դպրոց չկար, իսկ այժմ Կարելիայում յերեխաների չորս հինգերորդը ուսումնառում է մայրենի լեզվով: Դպրոցներն ընդդրկել են դպրոցահաս տարիքի յերեխաների 82 տոկոսը: Ճոմը ռայոններում արդեն մտցված է ընդհանուր ուսում, իսկ 1930 թ. աշնան մտցվում է ամբողջ հանրապետության մեջ**):

Բելոռուսիան առաջինը դաշնակից հանրապետություններից կոոպակցության 16–րդ համագումարի ժամանակ մտցրեց ընդհանուր պարտադիր ուսում:

ԲՍՍՀ 1930 թ. ուներ 69 տոկոս դրագետ (ամբողջ ազգաբնակության կազմում սկսած տասը տարեկանից): Այս կողմից ԲՍՍՀ բռնում է յերկրորդ տեղը ՆՍՀՄ մեջ (առաջին տեղը բռնում է Ուկրաինան, վորտեղ 71,3 տոկոսը դրագետ է):

*) «Իզվեստիա» 12 հունիսի 1930 թ.:

**) «Իզվեստիա», 4 ոդոստոսի 1930 թ. «Կարելիայի սոցիալիստական խորհրդային ինքնավար հանրապետության տասնամյակի առթիվ» հոդվածը:

Մինչև հեղափոխությունը Բելոռուսիայում վոչ մի ԲՈՒՀ չկար, այժմ այնտեղ կա 4 ԲՈՒՀ:

Առհասարակ բոլոր ազգային հանրապետությունների և մարզերի մեջ բուռն թափով ածում է վոչ միայն ԲՈՒՀ-եր և տեխնիկումներ: ԲՍՖՀ և ՈՒՍՖՀ մեջ հիմնված են գիտությունների ակադեմիաներ, մյուս բոլոր հանրապետություններում ստեղծվում են գիտական-հետազոտական ինստիտուտներ:

Անհրաժեշտ է ընդգծել, վոր ազգային ռայոնների դպրոցական հիմնարկները տեղական ազգաբնակությանը սպասարկում են մայրենի լեզվով: Այսպես որինակ, մինչև պատերազմը ուկրաիներեն լեզվով դասավանդություն չկար, իսկ այժմ Ուկրաինայում ուկրաինական տարրորդների 93,9 տոկոսը սովորում են մայրենի լեզվով: Վրաստանում այդ թիվը հասնում է 98,1 տոկոսի, Ուզբեկստանում՝ 96,9 տոկոսի, Թուրքերը՝ 95,5 տոկոս*):

Ազգային մանուլի ածման մասին զարմանալի են տպալիստ հետևյալ թվերը.

Կուսակցության 15-րդ համագումարի ժամանակ կային 130 ժուրնալ և 201 թերթ 49 լեզուներով, իսկ 16-րդ համագումարի ժամանակ՝ 357 ժուրնալ և 349 թերթ 58 լեզուներով: Ազգային բանվորական թերթերի տիրաժը ավելացել է 7 անգամից ավելի, իսկ ազգային գյուղացիական թերթերի տիրաժը 2½ անգամ**):

*) «Национальная политика ВКП (б) в цифрах». եջ 266:

**) Ընկ. Կագանովիչի զեկուցումը Համկկ(բ) 16-րդ համագումարում:

Բուռն կերպով ածում է դրքի պահանջը ազգային լեզուներով:

Ազգային լեզվով դրքեր հրատարակելու համար հանրապետությունների մեջ գոյություն ունեն ազգային պետական հրատարակչություններ, բացի դրանից ազգային փոքրամասնությունների և կուլտուրական տեսակետից ամենաթույլ ժողովուրդների սպասարկման և ազգային հրատարակչություններին ոժանդակելու համար ստեղծված է «ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատարակչություն» (Ցենտրիզդատ), վոր հրատարակում է 50 լեզվով դրականություն: 1930 թ. Ցենտրիզդատի հրատարակության արտադրանքը ավելացավ յերկու և կես անգամ 1929 թվի դիմաց:

Գրագիտության, դպրոցական ցանցի, ազգային մամուլի ածումը ստեղծում են նպաստավոր հող ազգային կուլտուրաների այն ծաղկման համար, վոր մենք տեսնում ենք ազգային հանրապետություններում: Սակայն դա վոչ թե պարզապես ազգային կուլտուրաների պարզացում է, այլ կուլտուրաների՝ «ձևով ազգային, բովանդակությամբ պրոլետարական» (Ստալին), վորովհետև այդ կուլտուրաները կառուցվում են պրոլետարական դիկտատուրայի ղեկավարությամբ:

Բացի այն ժողովուրդներից, վորոնք խոր գանգվածներով ապրում են ազգային հանրապետությունների մեջ, մենք ունենք շատ ազգային փոքրամասնություններ, ցրված այլ ժողովուրդների մեջ, ինչպես որինակ՝ հրյաները, լեհերը, հույները, լատիշները և այլն: Բելոռուսները և ուկրաինացիները ունեն իրենց ազգային հանրապետությունները, բայց բելոռուսներ և ուկրաինացիներ ապրում են նաև այլ հանրապետություն-

Նեքսում, Մարկերում և յերկրներում: Նույնպիսի վիճակի մեջ են դերմանացիք, թաթարները և այլն: Մեր ազգային քաղաքականությունը խնդիրը և դնում ապահարկել նաև ազգային փոքրամանուքյունները նրանց մայրենի լեզվով: Այդ խնդիրը լուծել դժվար և նկատի ունենալով ազգային փոքրամանուքյունների ցրվածությունը: Բայց և այնպես այդ բնագավառումն էլ մենք ունենք դեալի հաջողություններ: Ամենի խոշոր ազգային փոքրամանուքյուններին հատկացված են ինքնավար մարզեր (շրջաններ), մյուսների համար ազգային շրջաններ (округ) և ոլոսներ, իսկ փոքր խմբերով այլ ազգությունների մեջ ապրող ժողովուրդների համար կազմված են ազգային գյուղխորհուրդներ: Այսպես օրինակ ԲԱՍՀ կան հրեական, լեհական, լատիշական և այլ գյուղխորհուրդներ, ՈՒՍՍՀ մեջ՝ գերմանական, լեհական, հրեական, բուլղարական և այլ գյուղխորհուրդներ: Այնտեղ կան նաև լեհական (Մարխլինսկի) ոլոսն, յերեք հրեական ոլոսներ (կոլսովետյան 15-րդ համագումարի ժամանակ կար միայն մի հրեական ոլոսն):

Ուկրաինական ազգային ոլոսներ և գյուղխորհուրդներ կան կենտրոնական-անտհոդային մարզում, Գերմանական Հանրապետության մեջ և այլն: Սերբիայում ազգային փոքրամանուքյուններին հատկացված են—Այրատի ինքնավար մարզը, Թակուսի շրջանը և 7 ոլոսներ (վորոնցից մեկը գերմանական), բացի դրանից այնտեղ կան 277 ազգային գյուղխորհուրդներ:

Ազգային մարզերը, շրջանները, ոլոսները, խորհուրդները ազգափոքրամանուքյուններին ապահարկում են մայրենի լեզվով ապարատներով և դպրոցներով:

Այնտեղ ապարատների մեջ ներգրավում են ազգային փոքրամանուքյուններին պատկանող աշխատավորների ներկայացուցիչները, գործավարուքյունը թարգմանվում է տեղական լեզուներով, ստեղծված են դատական կամերաններ, վորոնք իրենց աշխատանքը տանում են մայրենի լեզվով և այլն:

Ազգային փոքրամանուքյունների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով կազմակերպվում են մանկավարժական տեխնիկումներ: Միայն ՌՍՖՍՀ մեջ 1928–29 թվին գոյություն ունեին 49 ազգային մանկավարժական տեխնիկումներ, 6 ազգային բանֆակներ, և 35 ազգային բաժանմունքներ բանֆակներին կից: 1929–30 թ. բացվում են 2 նոր ազգային բանֆակներ, 2 տեխնիկում և 29 ազգային բաժանմունք տեխնիկումներին կից*):

Յեվրոպայի ազգային փոքրամանուքյունների համար, ռուսական դպրոցների համեմատուքյամբ, ընդլայնական ցանցի ավելի արագ աճման մասին վկայում են հետևյալ փաստերը. Սերբիայում 1926–27 թ. մինչև 1927–28 թ. ռուսական դպրոցների թիվն ավելացել է 12 տոկոսով, ոլրպատական դպրոցների թիվը 17 տոկոսով, չուվաշական դպրոցների թիվը 22 տոկոսով, մորդավական դպրոցների թիվը 40 տոկոսով**):

Ամփոփենք:

Մենք գեալի հաջողություններ ունենք վաստական ազգային անհավասարության վերացման գործում վոչ միայն անտեսության, այլ և յերկրների ժողովուրդնե-

*) «Революция и национальность» ժուռնալ, Ռոխիմբաևի հոդվածը:

**) Նույն տեղը, Շալյապայի հոդվածը:

րի, յետամնաց ազգային ռայոններուն կուլտուրայի բարձրացման։ Նրանց կուլտուրական և անտեսական աճման տեմպն ավելի բարձր է համամիութենականից։ Բայց այդ տեմպը դեռևս անբավարար է, պետք է ուժեղացնել այն, հաշվի առնելով Սովետական Միության առաջավոր և յետամնաց ժողովուրդների զարգացման մակարդակի հսկա տարբերությունը։ Մոռանալ այդ խնդիրը, նշանակում է մոռանալ կուսակցության գիծը ազգային հարցում, նշանակում է ընկնել մեծապետական նացիոնալիզմի ապիեցության տակ։

Յետամնաց ռայոններուն համար առաջավոր ռայոններին հասնելու խնդիրը հեշտ խնդիր չէ։ Մենք տեսնում ենք, որ Սովետական Միությունն ամբողջ և նրա ավելի առաջավոր շրջանները, աշխարհին ցույց են տալիս տնտեսական և կուլտուրական աճման չտեսնված տեմպ։ Դրա համար յետամնաց ազգային հանրապետությունները և շրջանները կարող են դարձնալ և ավելի արագ թափով, պայմանով որ նրանց ոժանդակեն Սովետական Միության ավելի առաջավոր հանրապետությունները։ Մենք պետք է թափենք բոլոր ջանքերը լուծելու համար այդ խնդիրը հնարավոր չափով ավելի կարճ ժամանակամիջոցում։

Որքան ավելի մոտ կլինի Սովետական Միությունը «հասնելու և անցնելու» տեխնիկապես և տնտեսապես ավելի առաջավոր յեվրոպական և ամերիկական պետություններին, այնքան ավելի մեծ ոգնություն նա կարող է ցույց տալ յետամնաց ժողովուրդներին զարգացմանը, բարձրացնելով նրանց ավելի առաջավորների մակարդակին։ Իրենց հերթին յետամնաց ազգային ռայոնները անցած տարիների նվաճումների հիման վրա

կկարողանան ամեն տարի արագացնել իրենց տնտեսական և կուլտուրական աճման տեմպը։

Մեր Տնտեսական և կուլտուրական շինարարությունն արդեն կարողացել է ստեղծել նախադրյալներ վատասական ազգային անհավասարության մնացորդների ավելի արագ վերացման համար։

Այստեղ մեր առաջ դրված խնդիրը 16-րդ համագումարը ձևակերպել է կենտկոմի հաշվետվության բանաձևում։ Համագումարը դտավ, որ կուսակցությունը պետք է ուժեղացնի.

«Մ[illegible]թե պարզ չե, որ ժխտել ազգային կուլտուրայի լոզունգը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում նշանակում է ժխտել ԽՍՀՄ վոչ վելիկոռուս ժողովուրդների կուլտուրական վերելքի անհրաժեշտությունը, ժխտել այդ ժողովուրդների համար ընդհանուր պարտադիր կրթության անհրաժեշտությունը, հոգեպես և մտավորապես սուրկացնել այդ ժողովուրդները ռեակցիոն նացիոնալիստներին:

«Լենինն իրոք բուրժուազիայի տիրապետության պայմաններում ազգային կուլտուրայի լոզունգը համարել է ռեակցիոն լոզունգ: Բայց մ[illegible]թե՞ կարող էր սուրբ կերպ լինել: Ի՞նչ է ազգային կուլտուրան ազգային բուրժուազիայի տիրապետության պայմաններում: Բուրժուական իր բովանդակությամբ և ձեվով ազգային կուլտուրա, որ նպատակ ունի նացիոնալիզմի թույնով թունավորել մասսաները և ամրապնդել բուրժուազիայի գերիշխանությունը: Ի՞նչ է ազգային կուլտուրան պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում: Սոցիալիստական իր բովանդակությամբ և ձեվով ազգային մի կուլտուրա, որ նպատակ ունի դաս-

տիարակել մասսաները ինտերնացիոնալիզմի վոգով և ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան: Ի՞նչպես կարելի է չվերթել սկզբունքային տարբեր այս երկու երևույթները, առանց կապերը խզելու մարքսիզմի հետ: Մ[illegible]թե պարզ չե, որ պայքարելով ազգային կուլտուրայի լոզունգի դեմ բուրժուական կարգերի որով, Լենինը հարվածում եր ազգային կուլտուրայի բուրժուական բովանդակությանը, և վոչ թե ազգային ձեվին: Անհիմ կլիներ յենթադրել, որ Լենինը սոցիալիստական կուլտուրան համարում եր ապազգային մի կուլտուրա, որ չունի այս կամ այն ազգային ձեվը: Բունդականները*) մի ժամանակ իսկապես Լենինին վերագրում եյին այդ անմտությունը: Սակայն Լենինի յերկերից հայտնի է, որ նա խիստ բողոքել է նման ղրպարտության դեմ, վճռականորեն հերքելով այդ անմտությունը: Մ[illegible]թե՞ մեր հարգելի ուկլոնիստները վերջիվերջո ելի քաշ են գալիս բունդականների հետքերով:

Այս ամենից հետո ի՞նչ մնաց մեր ուկլոնիստների վերաբերմունքից:

Վոչինչ, բացի ինտերնացիոնալիզմի դրոշով ձեռնածություն անելուց և Լենինին ղրպարտելուց:

Վելիկոռուսական շովինիզմի կողմը թեքվողները խորապես սխալվում են, յեթե կարծում են, որ ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի շինարարության շրջանը ազգային կուլտուրաների քայքայման և վերացման շրջանն է: Ընդհակառակը: Իրականում: պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի շինարարության շրջանը ԽՍՀՄ մեջ հանդիսանում է բովանդակությամբ սո-

*) Բունդ—կոչվում է հրեական սոցիալ-դեմոկրատական բանվորական միությունը: Դա մանր-բուրժուական, մենշևիկյան, նացիոնալիստական կազմակերպություն եր:

ցիալիստական և ձևով ազգային կուլտուրաների ծաղկման շրջան: Նրանք, յերևի, չեն հասկանում, վոր ազգային կուլտուրաների զարդացումը ել ավելի լայն ծավալ կստանա մայրենի լեզվով ընդհանուր պարտադիր նախնական ուսուցում մտցնելու և արագացնելու հետևանքով: Նրանք չեն հասկանում, վոր ազգային կուլտուրաների զարդացման պայմանով միայն կաբելի կլինի յեռամնյա ազդուրյուններն իսկական կերպով հաղորդակից դարձնել սոցիալիստական շինարարության ղործին: Նրանք չեն հասկանում, վոր հենց սրանումն է կայանում ՌՍՖՍՀ ժողովուրդների ազգային կուլտուրաների դրազմանը նպաստելու և ոգնելու լենինյան քաղաքականության հիմքը:

Կարող է տարօրինակ թվալ, վոր մենք՝ կողմնակիցներս ազգային կուլտուրաների ամբողջ միաձուլման (թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ) մի ընդհանուր կուլտուրայի մեջ, մի ընդհանուր լեզվով, միաժամանակ կողմնակից ենք ազգային կուլտուրաների ծաղկման տվյալ մոմենտում: Սակայն սրանում տարօրինակ վոչինչ չկա: Պետք է թույլ տալ ազգային կուլտուրաներին զարդանալ և ծավալվել, դրսևորել լրևնյթ բոլոր հնարավորություններն ու ուժերը, վորպեսզի պայմաններ ստեղծվեն նրանց ձուլման համար մի ընդհանուր կուլտուրայի մեջ, մի ընդհանուր լեզվով: Ձևով՝ ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրաների ծաղկումը մի յերկրում պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում՝ նրանց ձուլման համար մի ընդհանուր սոցիալիստական (թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ) կուլտուրայի մեջ, մի ընդհանուր լեզվով, յերբ պրոլետարիատը կհաղթա-

նակի ամբողջ աշխարհում և սոցիալիզմը մուտք կդործի կենցաղի մեջ,—հենց այստեղ ե կայանում ազգային կուլտուրայի լենինյան հարցադրման դիալեկտիկան*):

*) Դիալեկտիկա.—Դիտություն բնության, պատմության և մտածողության մեջ հարժման ընդհանուր որենքների մասին: Բոլոր դիտությունները դիտակցարար թե անդիտակցարար հենվում են դիալեկտիկայի վրա: Դիալեկտիկան մենաում է նրանից, վոր ամեն, ինչ գոյություն ունի, ապրում է... գոյություն ունի և ապրում է լոկ վորոշ հարժման ուժով: Այսպես պատմական հարժումը ստեղծում է հասարակական հարաբերությունները և այլն» (կ. Մարքս): Շարժումը հետևանք է հակադիր տարրերի պայքարի: Որինակ՝ պրոլետարական հեղափոխությունը կարող է մեկայն հետևանք լինել պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարի: Դիալեկտիկան մենաում է հակադրությունների փոխադարձ ներթափանցման որենքից: Որինակ՝ կապիտալիզմի զարդացման և ուժեղացման շրջանը անխզելի կերպով կապված է պրոլետարիատի—կապիտալիստական հասարակակարգի դերեզմանափորի ամման հետ: Կապիտալիզմը ուզում և ամրապնդել իր դերքը ճնշում տրած դնելով բանվոր դասակարգի վրա, կրճատելով աշխատավարձը, իսկ դա մղում է բանվորական մասսաները դեպի հեղափոխական պայքարի ճանապարհը և քայքայում և կապիտալիզմը: ՌՍՖՍՀ մեջ ՆԵՊ-ը սկզբում պատճառ յեղավ մասնավոր կապիտալի ուժեղացման, բայց ՆԵՊ-ը հնարավորություն ավեց մեզ վերականգնել անտեսությունը, անցնել սոցիալիզմի շինարարությանը, կապիտալիստական տարրերի վճռական դուրս մղմանը, իսկ հետո կուլակության վերացմանը վորպես դասակարգի: Այսպիսով պատմականորեն տապալվեց նման հակառության ճշտությունը—պրոլետարիատի շահերի համար նպաստավոր ել ժամանակավորապես թույլ տալ սոցիալիզմին թշնամի տարրերի աշխուժացումը: Բնության բոլոր յերևույթները համակված են հակասություններով: Որինակ՝ յուրաքանչյուր մարդ յուրաքանչյուր տվյալ մոմենտին նույնն է և նույնը չի համեմատած նախորդ և հաջորդ մոմենտներին: Հովհաննեսը մնում է Հովհաննես այսօր, վաղը կամ մի տարի հետո, բայց Հովհաննեսը հիմա նույնը չի,

կամ որևէ ազգերի ինքնորոշման իրավունքի, նույնիսկ մինչեվ բաժանվելու իրավունքի լենինյան հարցադրումը: Լենինը յերբեմն ազգային ինքնորոշման թեզիսը պատկերացնում եր հետևյալ պարզ ֆորմուլայի ձեվով.«բաժանվել մխանալու համար»:Լավ դիտեցեք—բաժանվել մխանալու համար: Սա նույնիսկ պարադոքսի*) նման է: Այնինչ այս «հակասական» ֆորմուլան արտացոլում է մարքսյան դիալեկտիկայի այն կենսունակ ճշմարտությունը, վոր հնարավորություն և տալիս բայշեվիկներին վերցնել ամենաանառիկ ամրոցները ազգային հարցի բնագավառում:

Նույնը պետք է ասել ազգային կուլտուրայի ֆորմուլայի մասին. ազգային կուլտուրաների (և լեզուների) ծաղկումը մի յերկրում պրոլետարիատի դիկտատուրայի ընթացքում՝ պատրաստելու համար պայմաններ նրանց մահացման և ձուլման մի ընդհանուր սոցիալիս-

---

*) Պարադոքս—սովորական տրամաբանական մտքին, դատողության հակասող, տարօրինակ, անսպասելի մի միտք:—Մ. Շ.

տական կուլտուրայի (և մի ընդհանուր լեզվի) մեջ սոցիալիզմի հաղթանակի շրջանում ամբողջ աշխարհում»:

Կարող են ասել, վոր նման հարցադրումը «հակասական» է: Բայց մի թե՞ նույնպիսի «հակասություն» չկա մեզանում պետության հարցի մասին: Մենք կողմնակից ենք պետության մահացման: Ցեվ միաժամանակ մենք պաշտպանում ենք պրոլետարիատի դիկտատուրայի ուժեղացումը, վոր ամենազորեղ և ամենաամուր իշխանություն և ցարդ ոյություն ունեցող բոլոր պետական իշխանություններից: Պետական իշխանության ամենաբարձր զարգացումը պետական իշխանության մահացման համար պայմաններ պատրաստելու նպատակով— ահա մարքսիստական ֆորմուլան: Սա «հակասակա՞ն» է: Այո «հակասական» է: Բայց այդ հակասությունը կենսունակ է, և նա անմիջապես արտացոլում է մարքսյան դիալեկտիկան:

Ընկ. Ստալինի յելույթը համագումարում ազգային լեզուների և կուլտուրաների հարցի մասին սպառիչ կերպով նկարում է մեր ամբողջ կուլտուրական շինարարության ապագան, հեռանկարները սոցիալիզմի պայմաններում:

ՄԵԾԱՊԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈՎԻՆԻԶՄԸ ԳԼԽԱՎՈՐ ՎՏԱՆԳՆ Է:

Նացիոնալիստական թեքումները խանգարում են կուսակցության ազգային քաղաքականության ճիշտ կիրառմանը: Մինչդեռ՝

«Խորհրդային Միության սոցիալիստական հաջող ինդուստրացումը, գյուղատնտեսության վերելքը և վերակառուցումը սոցիալիստական հի-

մունքների վրա, համատարած կոլեկտիվացման և կուլակության, վորպես դասակարգի, վերացման իրագործումը պահանջում են վճռական կերպով անցկացնել ազգային բաղաքականությունը, ամենալայն կերպով զարգացնել Խորհրդային Միության ժողովուրդների ազգային կուլտուրաները, վորովհետև միայն այդ ճանապարհով կարելի է իսկապես և լիովին այդ ժողովուրդների աշխատավոր մասսաները մասնակից դարձնել սոցիալիստական շինարարությանը»*):

Մեզ մոտ աճում և արդյունաբերությունը ծայրամասերում և դրա հետ միասին աճում են պրոլետարիատի կադրերը տեղական ազգություններից: Տեղական հետամնաց բանվորներին դիցուք սոցիալիստական մրցման և հարվածայնության մեջ ներգրավելու համար, անհրաժեշտ է նրանց շրջանում ուժեղացնել քաղաքական-դաստիարակչական և կրթական աշխատանքը. նրանց վորակավորումը բարձրացնելու և նրանցից մեզ համար անհրաժեշտ կադրեր պատրաստելու համար հարկավոր է բարձրացնել նրանց կուլտուրական մակարդակը: Բայց այս ամբողջ աշխատանքը կարող է հաջող դնալ միայն այն ժամանակ, յերբ նա տարվում է մայրենի լեզվով:

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը յեռամյա ազգային հանրապետություններում մանավանդ պահանջվում է կուլտ-կրթական լայն աշխատանք մայրենի լեզվով: Գյուղացին կհասկանա կոլեկտիվացման խնդիրները և ոգուտները, յերբ կուսակցական և խորհրդային ապարատը բաղկացած է տեղական ազգային-կենցաղային առանձնահատկություններին

*) «Պրավդա»-ի 1930 թ. հուլիսի 27-ի առաջնորդողը:

ծանոթ, գյուղացու հետ նրա մայրենի լեզվով խոսել իմացող մարդկանցից, գյուղում կտանի համապատասխան բացատրական աշխատանք:

Դեպի վելիկոռուսական չովինիզմն յեղած թեքումն արգելք է հանդիսանում լենինյան ազգային քաղաքականության կիրառմանը: Դեպի տեղական չովինիզմը յեղած թեքումը խեղաթյուրում է այդ քաղաքականությունը: Յերկու թեքումներն էլ տարածում են վոխադարձ անվստահություն և վտանգավոր են: Ժամանակին կուսակցության 12-րդ համագումարը նշեց, վոր գլխավոր վտանգը հանդիսանում է մեծապետական թեքումը, վելիկոռուսական չովինիզմը: Այդ դրությունը ճիշտ է մնում և այսօր: Դրա համար կուսակցության 16-րդ համագումարը կենտկոմի հաշվետվության բանաձևում ընդգծում է.

«Գլխավոր վտանգը տվյալ ետապում հանդիսանում է մեծապետական թեքումը, վոր փորձում է վերանայել լենինյան քաղաքականության հիմքերը և ինտերնացիոնալիզմի դրոշի տակ քաղարկում և առաջներում տիրող վելիկոռուսական ազգի մեռնող դասակարգերի ձգտումները՝ վերադարձնելու իրենց կորցրած դիրքը»:

Վելիկոռուսական ռուսական չովինիզմը պարարտ հող է պատրաստում տեղական չովինիզմի համար: Մեծապետական չովինիզմը գլխավոր վտանգն է: Բայց սրանից չի հետևում, վոր տեղական չովինիզմը վտանգավոր չէ, վոր նա ունի զուտ պաշտպանողական բնույթ: Համառ և առհասարակ տեղական չովինիզմը դառնում է հարձակողական, մեծապետական՝ տրվելյալ տերբիտորիայի վրա տարող ազգային վոտքամասը

նութիւնների և ավելի թուլ ժողովուրդների վերաբերմամբ: Որինակ Վրաստանում նման բնույթ և ստանում վրացական նացիոնալիզմը հայերի կամ ադրբեջանցիների վերաբերմամբ, Ուզբեկստանում—ուզբեկական շովինիզմը տաջիկների վերաբերմամբ, Կազակստանում—կազակական շովինիզմը կարա-կալպակների վերաբերմամբ, Ադրբեջանում թուրքական շովինիզմը քրդերի վերաբերմամբ և այլն: Մեծապետական ռուսական և տեղական նացիոնալիզմի համեմատական նշանակութիւնը տարբեր հանրապետութիւններում կարող և տարբեր լինել, նայած ովյալ ժողովրդի կուլտուրական մակարդակին, ազատաոր ազգայնացման ռուսաճանին և այլն: Տեղական կուսակցական կազմակերպութիւնները պետք և հաշվի առնեն այս ամենը:

Բացառութիւն կարող են համարվել այն ռայոնները, վորտեղ գլխավոր վտանգը պետք և ուղղել տեղական նացիոնալիզմի դեմ: Վերցնենք Հայաստանը, վորտեղ, ինչպես նշեցինք վերևում, պետապարատում դրեթե 95 տոկոսը հայեր են:

«Այդ հանրապետութիւնը, վորտեղ ռուսներ համարյա չկան, վորտեղ կուսակցութիւնը, բանվոր դասակարգը, պետական ապարատը դրեթե ամբողջովին ազգայնացված են... Հայաստանի Կոմկուսը հաշվի առնելով ուժերի փոխհարաբերութիւնը ովյալ հանրապետութեան ներսում, պետք և ուղղի և ուղղում և հիմնական կրակը տեղական նացիոնալիզմի դեմ, մխժամանակ չթուլացնելով հարվածները վելիկոռուսական շովինիզմի դեմ»*):

*) «Պրավդա», 27 հուլիսի, 1930 թ., Տարոլովի հոդվածը:

16-րդ համագումարը կենտկոմի հաշվետվութեան բանաձևում տվեց նման դիրեկտիվ.

«Կուսակցութիւնը պետք և ուժեղացնի պայքարը ազգային հարցում յերկու թեքումների և նրանց հանդեպ հաշտվողականութեան դեմ»:

Բուրժուական նացիոնալիզմն իր ազդեցութեան և յենթարկում գյուղատնտեսութեան մի քանի խմբերը և բանվորների, առանձնապես գյուղի հետ կապվածների յեսամնաց վորոշ շերտերը: Ցարական ինքնակալութիւնը պահել և վելիկոռուս բանվորների և գյուղացիների մեջ շովինիզմի թույնը: Նրա հետքերը դեռ մնում են և այսոր: Դա կարելի յե տեսնել թեկուզ հետևյալ որինակներով—արհամարհական և թշնամական վերաբերմունքը դեպի հրեաները, ռուս և առհասարակ յեվրոպական բանվորների արհամարհական վերաբերմունքը արևելյան ազգային հանրապետութիւնների մեջ դեպի տեղական ազգութիւններին պատկանող բանվորները:

Շովինիզմի ազդեցութեան տակ գործը հասավ ընդհարման Հեռավոր Արեվելքում ռուս և չինացի ուղևորացի բանվորների մեջեվ: Հեռավոր Արեվելքում մի անգամ նման ընդհարման ժամանակ մելիցոներները կարգը հաստատելիս ռուսներին չեյին դիպչում, իսկ չինացիների վերաբերմամբ գործ չեյին դնում անթույլատրելի բռնութիւն: Այնտեղ չինացի բանվորների վերաբերմամբ կարելի յե լսել.—«խոդյա», «Ջանկայ-չի» մականունները: Կազանում հալածում եյին մի ակ թաթար կին-ինժեներ կեմալեդդինովային*):

*) «Революция и национальность» ժուռնալը, № 3, Դիմանշտեյնի հոդվածը:

Նկատի ունենալով նացիոնալիզմի արտահայտությունները բանվոր դասակարգի վրայ հավերում, 16-րդ համագումարը ընդ. Շվերնիկի դեկուցման առթիվ յեղած բանաձևում նշեց, որ՝

«... Պրոֆմիությունները... պետք է ևիշտ կերպով կազմակերպեն և ուժեղացնեն պայքարը անտեռնիմիզմի, շովինիզմի, ազգային սահմանափակության և այլնի դեմ»:

Մեր ամբողջ շինարարության մեջ մենք պետք է հիշի հաշվի առնենք ազգային մոմենտները և առանձնահատկությունները: Խորհրդային հանրապետությունների միջև գոյություն ունեցող կապը, որն ամրապնդվում է տարեցտարի, չի նշանակում հրաժարվել ազգային առանձնահատկություններն հաշվի առնելուց: Այդ կապը մի քայլ չե դեպի ազգային հանրապետությունների և մարզերի վերացումը, ինչպես մեկնաբանում են մի կողմից տեղական շովինիստները, իսկ մյուս կողմից՝ վելիկոռուսական շովինիստները, ուկրաինական նացիոնալիստները, որինակ, Խորհրդային Միության կազմությունը ժամանակին մեկնաբանում էին որպես մի քայլ դեպի հանրապետությունների վաստակական վերացումը Միութենական Հոդժողկոմատի կազմությունը նրանք նույնպես հասկանում էին որպես մի քայլ դեպի հանրապետությունների վերացումը: Շրջանացման ժամանակ փորձեր յեղան հակադրելու կուսակցության տնտեսական քաղաքականությունը (շրջանացումը կատարվում էր տնտեսական կապերի հիման վրա) ազգային քաղաքականությանը:

Մինչդեռ իրականում ազգային մոմենտը տնտեսական կապի մոմենտի հետ միասին կարևորագույն մոմենտներից մեկն էր շրջանացման ժամանակ, իսկ շրջա-

նացումն էր հերթին նպաստում էր կուսակցության ազգային քաղաքականության կիրառմանը, ազգային շրջանների տնտեսական և կուլտուրական վերելքին: Համագումարը կենտկոմի հաշվետվության բանաձևում նշում է, որ—

«... Ճերկրի տնտեսական շրջանացման լիակատար կիրառումը նշանակալի չափով կարագացնի առաջները յեռամյաց շրջանների, ծայրամասերի ազգային հանրապետությունների ինդուստրացումը, կտեղծի այնտեղ արդյունաբերական և պրոլետարական նոր կենտրոններ...»:

Գավառների վերացման հետևանքով զարգացել ծանդում են մեծապետական վարձերը հակադրելու շրջանացումը ազգային քաղաքականության:

Բանի որ մի շարք մարզերում և յերկրներում կան ազգային տարբեր համախմբումներ և քանի որ բոլոր յերկրներում կամ մարզերում վերացվում են միջանկյալ գավառային ողակները և անմիջապես կապ և հաստատվում շրջանների հետ, յերեվան են գալիս հայացքներ, թե անպատասխանատվորեն և ազգային հանրապետությունները և մարզերը վերոնք մտնում են այս կամ այն յերկրի կազմի մեջ:

Նման մեծապետական յելույթների կանխելու համար, համագումարը կվ. հաշվետվության առթիվ յեղած բանաձևում արձանագրեց՝

«Գավառների վերացումը կիրառելու փուլնիցիաները վերաբաշխելու ժամանակ անհրաժեշտ է ապահովել ազգային միավորումներին (հիմնավար մարզերին, ազգային շրջաններին և խորհուրդներին) տրված իրավունքների պահպանումը*)»:

*) «Կվ. և ԲԳՏ ԺԿ հաշվետվությունը Համկ(բ) 16-րդ համագումարին».

IV. ԾԱՅՐԱՄԱՍԵՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ՝ ՁԱՆԱՊԱՐՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ազգային անհավասարության մնացորդների վերացման համար հսկա նշանակություն ունի ազգային ծայրամասերի ինդուստրացումը, այն տեղերում արդյունաբերական կենտրոնների ստեղծումը: Այս բնագավառում 16-րդ համագումարի վորոշումները ազգային հանրապետությունների առաջ բաց են անում հարուստ հեռանկարներ:

Համագումարի դիրեկտիվները «սոցիալիստական շինարարության բայշեվիկյան մարտական տեմպերի», հանգամյակը չորս տարում կատարելու մասին՝ այստեղ մեծ դեր կխաղան: Ուժեղացնել սոցիալիստական շինարարության տեմպերը՝ նշանակում է ստեղծել մեծ հնարավորություններ յետամնաց ազգային շրջանները խորհրդային Միության առաջավոր մարզերի մակարդակ ստեղծելու մասին՝ այստեղ կխաղա կարեվոր դեր:

Համագումարի վորոշումը Արևվելքում յերկրորդ ածխամետաղագործական կենտրոն (Ուրալ-Սիբիրի) ստեղծելու մասին՝ այստեղ կխաղա կարեվոր դեր:

Համագումարը հավանություն ավեց կենտկոմի 1930 թ. մայիսի 15-ի վորոշմանը այն մասին, վոր—

«...Ցերկրի ինդուստրացումը չի կարող հետագայում հենվել միայն հարավային ածխա-մետա

դագործական բազայի վրա: Ցերկրի արագ ինդուստրացման համար կենսական անհրաժեշտ պայման է Արևելքում ԽՍՀՄ յերկրորդ հիմնական ածխամետաղագործական կենտրոնի ստեղծումը, որ տագործելով Ուրալի և Սիբիրի ածուխի և մետաղի ամենահարուստ հանքերը:

Ածխա-մետաղագործական նոր կենտրոնը շատ մոտիկ է Արևվելքի մի շարք ազգային հանրապետությունների: Այդ հանրապետությունների զարգացումը շատ ավելի արագ առաջ կգնա, յերբ նրանք կկարողանան մոտիկից և ավելի եժան գնով ածուխ և մետաղներ ստանալ իրենց աճող տնտեսության կարիքների համար:

Համագումարի վորոշումների հետեվանքով վերաքննվում են Ուրալի և Սիբիրի հնգամյակները, վորով Սիբիրի արդյունաբերության ամբողջ արտադրանքը հնգամյակի վերջում, ԾՏԳ-ին նշումներով, կավելանա համարյա յերեք անգամ սկզբնական պլանի համեմատությամբ, կապիտալ ներդրումներն արդյունաբերության մեջ կավելանան Ուրալի հնգամյակի նախկին նշումները:

Խոսելով արդյունաբերության աշխարահագրական դասավորման մասին, ընկ. Կուրչևիվ համագումարում իր զեկուցման մեջ ասաց.

«*Արդյունաբերության բաշխման մեր նախագծերում մենք պետք է մենքենք նոր շրջաններ առաջ քաշելու սկզբունքից, այնպիսի շրջաններ, վորոնք ունեն հումքի մեծ աղբյուրներ, վորպեսզի լիովին օգտագործենք յերկրի տրանսպորտական բոլոր ուժերը:*

Սիբիրը, իր լայնածավալ տարածություններով և բնական հսկայական հարստություններով մի ոլոր է, վորին սպասում է խոստանում և զարգացման բուռն տեմպեր: Մի քանի նախանշումների համաձայն Սիբիրի ար-

դյուղատնտեսական ամբողջ արտադրանքը ամբողջ արդյունաբերության մեջ կավելանա 14 անգամ, իսկ «Ա» խմբում (ծանր արդյունաբերությունը.— Մ. Շ.) 20 անգամ 1927–28 թ. դիմաց:

Ջախազանց հարուստ և խոշոր արդյունաբերական ռայոնի ապագա ունեցող յերկիր է Կազախստանը իր հարստություններով գունավոր մետաղների, ածուխի, կաուչուկի բույսերի, տեխնիկական կուլտուրաների և այլ բնագավառում: Կազախստանի արտադրանքը ըստ նոր նախագծումների հնգամյակի վերջում պետք է աճի 15 անգամ 1927–28 թ. համեմատությամբ. Կազախստանը կդառնա ինդուստրիալ ռայոն, որ կտա մեր տնտեսությանը չափազանց արժեքավոր արտադրանք, կազատի մեզ գունավոր մետաղների, ոսկեվի արդյունաբերության, տեքստիլ արդյունաբերության համար հումքի ներմուծումից և այլն»:

Այսպիսով Կազախստանը կունենա զարգացման այնպիսի տեմպեր, որ մի քանի անգամ կգերազանցեն համամիութենական տեմպերը: Իսկ Կազախստանի ինդուստրացումը անկասկած նշանակալի ազդեցություն կգործի Միջին Ասիայի նրան հարևան հանրապետությունների զարգացման արագացման վրա:

Անհրաժեշտ է նշել, որ ազգային հանրապետությունների կազմումը ել ավելի արագ առաջ չարժեց այդ հանրապետությունների բնական հարստությունների հետազոտական գործը: Այդ ռայոնների հայտնաբերած հարստությունների և հնարավորությունների ոգտագործումը հիմք կդառնա ազգային հանրապետությունների ինդուստրացման համար:

16-րդ համագումարը դիրեկտիվ տալով արեվելքում այնքան-մետաղագործական կենտրոն ստեղծելու մասին, միաժամանակ անհրաժեշտ համարեց ուժեղ կերպով:

«. . .Զարգացնել արեվելյան ռայոններում (Ուրալ, Սիբիր, Կազակստան, Միջին Ասիա) արդյունաբերության մյուս ճյուղերը, վորոնք հենվում են տեղական հումքի աղբյուրների վրա (գունավոր մետաղների, տեխստիլ արդյունաբերություն և այլն)»:

Պետք է նշել, վոր հետագայում տեքստիլ նոր գործարանները կառուցվելու յեն այնտեղ, վորտեղ ածում է բամբակը:

Տաջիկստանում կառուցվելու յե Շուրաբի ելեկտրոկայանը մինչև 24 հազար կիլովատ ուժով, նույն տեղը կառուցվելու յե Վախշի ելեկտրոկայանը 300 հազար կիլովատ ուժով:

Անդրկովկասում կառուցվելու յե և կառուցվում են մի շարք հիդրոկայաններ, մետաղագործարաններ, տեքստիլ ֆաբրիկաներ և այլն:

Սակայն ինդուստրացման զարգացումը պետք է հենվի գյուղատնտեսության զարգացման նրա ապրանքայնության աճման վրա: Դրա համար անհրաժեշտ է գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Ազգային շրջանների գյուղատնտեսության ապրանքայնության աճումը նշանակում է ազգային հանրապետությունների գյուղացի ազգաբնակության յեկամուտի բարձրացումը:

Խորհրդային միության և յուրաքանչյուր առանձին ռայոնի առաջ խնդիրը է դրված—ստիպել բնությանը «խփ տալ իրեն», ստիպել հողին տալ վորքան կարելի մեյ ավելի արժեքավոր և մեզ համար անհրաժեշտ նյութեր: Դրա համար ռայոնները «կմանագիտացվեն» ըստ ա-

ռանձին մշակույթների, ավելի պակաս ոգուտավետ կուլտուրաները կվտարվեն ավելի ոգուտավետ կուլտուրաներով: Կուլտուրաները պետք է բաշխել ըստ ռայոնների ավելի խելացի կերպով, քան եղել է մինչև այժմ: Որոշ ռայոններ պետք է հատկացվեն գործնի արտադրության, ուրիշները՝ տեխնիկական մշակույթների, յերրորդն է՝ բանջարանոցային մշակույթների և այլն: Խոսելով Անդրկովկասի մասին ընկ. Ցակովլեվը համագումարում իր զեկուցման մեջ հայտարարեց.

Մեր լոզունգը պետք է լինի. «Կորչի յեգիպտացորենը Անդրկովկասից»: Մի՞թե խայտառակություն չէ, վոր յեգիպտացորեն է ճաշում այնտեղ, վորտեղ հաջողությամբ կարող են աճել բամբակ, թեյ և ռամի, պատղղները, խաղող, նարինջ և այլն: Մի՞թե դա անմխիթարություն չէ՞»:

Իհարկե յեգիպտացորենն կարելի յե ցանել ավելի հյուսիս, վորտեղ թեյը և բամբակը չեն կարող աճել: Պակաս արժեքավոր մշակույթների փոխարինումը ավելի արժեքավոր մշակույթներով չհավասարեցնի թե Միության ժողովրդական ամբողջ տնտեսության և թե՝ անդրկովկասյան հանրապետությունների տնտեսության համար: Միաժամանակ այս փոխարինումը պայմաններ կստեղծի Անդրկովկասում տեքստիլ, կոնսերվի և արդյունաբերության այլ ճյուղերի զարգացման համար: Հասկանալի յե, վոր շրջանների սպեցիալիզացիան ըստ մշակույթների հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ այն շրջանները, վորոնք գործնի, յեգիպտացորենի և այլնի փոխարեն մշակում են ավելի արժեքավոր կուլտուրաներ, կապահովվեն հացով: Դրա համար բավ չէ, վոր կուսակցությունը հացահատիկային մշակույթների զարգացման խնդիրը համարում է տնտեսության զարգացման, տեխնիկական մշակույթների հարցերի լուծման բանալին:

Մշակույթների ռացիոնալ բաշխումն ըստ ռայոնների անհնար կլիներ, յեթե յուրաքանչյուր առանձին հանրապետություն լիներ տնտեսական ինքնամփոփ միավոր և աշխատեր ինքը արտադրել այն ամենը, ինչ անհրաժեշտ է իրեն: Ըստ մշակույթների ռայոնների «մասնագիտացման» ուղին լայնորեն բաց է յերեք պայմանով— 1) պլանային տնտեսությամբ, վոր հնարավոր է միայն խորհուրդների յերկրում, 2) ազգային հանրապետությունների տնտեսական սերտ կապով և տնտեսական համագործակցությամբ, 3) կոլեկտիվացման զարգացումով:

Ռայոնների մասնագիտացման, ազգային հանրապետությունների գյուղատնտեսության ապրանքայնության բարձրացման բնագավառում հաջողություն անհնար է առանց համատ աշխատանքի գյուղատնտեսության կոլեկտիվացման ասպարեզում: Հենվելով այդ գործում արդեն ձեռք նվաճումների վրա, վորոնց մասին խոսեցինք վերեվում, ամրապնդելով և խորացնելով այդ հաջողությունները, բայց չսահմանվելով «գլխապտույտից», թույլ չտալով կուսակցության գծի խոտորումներ և աղավաղումներ, ազգային հանրապետությունները կկարողանան վճռական հաղթանակ ձեռք բերել կոլեկտիվացման գործում: Ի հարկե այստեղ պետք է հաշվի առնել, վոր նկատի ունենալով արեվելյան ծայրամասերի յետամնացությունը կոլեկտիվացման տեմպն այդ ռայոններում ավելի դանդաղ կլինի, քան խորհրդային Միության հացահատիկային հիմնական ռայոններում:

Անվիճելի է, որ խորհրդային Միությունը կոժան դակի աղջային հանրապետությունների կոլեկտիվացմանը: Կենտկոմի վորոշումը բամբակամշակության մասին նախատեսում է բամբակի դաշտերի մեքենայական մշակումը (մինչև 90 տոկոսը) հնգամյակի վերջում: Իսկ տրակտորների ուժեղ մատակարարումը, վոր կնպաստի բերքատվության բարձրացմանը և ցանքերի տարածության լայնացմանը, զարկ կտա կոլեկտիվացման աճմանը: Բացի դրանից դա կազատի մեջքին Ասիայի չքավոր գյուղացիական մասսաները կուլակների սորկությունից: Մեքենա-տրակտորային կայանները կազմակերպվում են պետության հաշվին, բամբակացան ռայոնների մեքենամատակարարումը և տրակտորամատակարարումը կատարվում են պետության միջոցներով՝ վորպես յերկարաժամկետ և կարճատև վարկեր: Այսպես խորհրդային պետությունը ոգնում է Արեվելքի չքավոր և միջակ գյուղացիական մասսաների նյութական դրության բարելավմանը:

Սրան պետք է ավելացնել վոռոգվող հողերի տարածության աւելիկա մեծացումը, վորը նույնպես կատարվում է պետական միջոցների ոգնությամբ: Սովի Սոեպում (Գալոդնայա Ստեպ Միջին Ասիայում) ծրագրվում է կառուցել վոռոգող ջրանցքների մի ցանց, վորոնք 450 հազար հեկտար տարածություն կզարձնեն ոազրարային — ինդուստրիալ ռայոն, հիդրոկայաններով. տոնյակ ֆաբրիկաներով և գործարաններով:

Պարզ է, թե ինչ նշանակություն կունենան յերկրին մի քա մատակարարելու համար այնպիսի կազմակերպություններ, ինչպես «Սկոտովոդը» և Ոմգեվոդը»: Վիթխարի անտառաբուժական սովխոզներ մի քանի միլիոնավոր դլուխ անասուններով կծավալվեն դլխավորապես Արեվելքի անասնաբուծական յեռամոնց ոայոններում: Բավական է ասել, վոր հնգամյակի վերջին «Սկոտովոդի»-ի և «Ոմգեվոդ»-ի սովխոզներին հատկացվելու է 80 միլիոն հեկտար տարածություն *): Միմիայն Միջին Ասիայում 1930/31 թ. կազմակերպվում են 30 անասնաբուծական խորհտնտեսություններ 5½ միլիոն հեկտար տարածության վրա: Մենք գիտենք, վոր հացահատիկային խորհտնտեսությունների լավ դրված աշխատանքը արդագործեց չրջակայքի գյուղացի ապդաբնակության կոլեկտիվացումը: Մոչոր տնտեսության առավելությունը մանրի համեմատության, հանդիսացավ լավագույն ագիտատորը կոլեկտիվացման ոգտին: Նույնպես դեր կխաղան անասնաբուծական խորհտնտեսությունները: Նրանք զարկ կտան անասնաբուծական տնտեսությունների կոլեկտիվացմանը, իսկ դրանով՝ նրանց ապրանքայնության և հասութաբերության բարձրացմանը, իսկ անասնաբուծական տնտեսության ապրանքայնության ուժեղացումը արեվելյան ռայոններում հող կստեղծի ծավալելու համար անասնաբուծական մթերքների վերամշակող արդյունաբերության ճյուղերը (յուղի և պանրի, բրդի և կաշվի գործարանները և այլն):

Այս ամենը միասին նշանակում է ստեղծել ապդային հանրապետությունների մեջ պրոլետարիատի ավելի բազմաթիվ կադրեր (արդյունաբերության և խորհտնտեսությունների մեջ):

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը և ինդուստրացումը ձեռք ձեռքի տված կընթանան արեվելյան

*) «Իզվեստիա», 10 օգոստոսի, 1930 թ.:

հանրապետություններին մեջ, նպաստելով այդ հանրապետությունների տնտեսական և կուլտուրական աճմանը, նպաստելով ազգային անհավասարության վերջնական վերացմանը:

Ազգային հանրապետությունների մեջ մեռնող դասակարգերի, դուրս մղվող կապիտալիստական տարրերի, բայերի, նեպմանների, բուրժուական ինտելիգենցիայի սրտով չէ այդ հանրապետությունների ժողովրդական տնտեսության վերակառուցումը: Նրանց չատ ավելի սիրելի յե անցյալը, երբ նրանք լայն ասպարեզ ունեյին ժողովրդական մասսաներ շահագործելու համար: Եթե ուկրաինական նացիոնալիստը հանդես է գալիս Դնեպրոստրոյի դեմ, ապա միջին ասիական նացիոնալիստը հանդես է գալիս այժմ անմարդաբնակ հակատական տարածությունների վրա խորհտնտեսությունների կազմակերպման դեմ, կոլխոզների դեմ, որոնք նշանակում են կուլակության վերջը: Աչխատավորների դասակարգային թշնամիները հանդես են գալիս սոցիալիս. շինարարության քաղաքականության դեմ՝ «ազգային չահերի» պաշտպանության դրոշակի տակ: Գտնվում են նույնիսկ կոմունիստներ, որոնք քարոզում են կուլակային հայացքներ: Որինակ Կազակստանում կոմունիստ Սարմոնը գրում է.

«Ամենալավ հողերը տրվում են խորհտնտեսություններին: Սրանից ի՞նչ ոգուտ, բացի դժվար դրության մեջ ընկած ուսանների ապահովումը: Եթե անցյալում կազակ բայերը գործիք եյին ցարական Ռուսաստանին և ստանում եյին աստիճաններ ու նվերներ, ապա այժմ մինչև կազակ բատրակները, որոնք ոտքսեր են ստանում, գործիք չեն այսօրվա Ռուսաստանին»*):

Այդ «կոմունիստի» համար տարբերություն չկա բատրակի, որին խորհրդային իշխանությունը ամեն կերպ ոգնում է, և բայի միջեվ, որ ծախում եր ժողովուրդը ցարական նվերների համար և ցարական չինովիկների ու ռուս վաճառականների հետ միասին թալանում եր նրան:

Այսպես կարող է դատել միայն դասակարգային թշնամու գործակալը:

Այստեղ արդարանում է այն, ինչ ընկ. Ստալինն ասում եր դեռ 1923 թ. 4-րդ պրպային խորհրդակցության ժամանակ.

«Միայն նացիոնալիստական ծածկոցի տակ կարող են թափանցել մեր կազմակերպությունների մեջ ծայրամասերում՝ ամեն տեսակի բուրժուական, այդ չարքում և մենշեվիկյան տգեղություններ»:

---

*) «Революция и национальности» ժուրնալ, № 3, Դիմանչեյնի հոդվածը. «Իդեոլոգիական պայքարն ազգային հարցում»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ազգային անհավասարության մնացորդների վերացումը, ազգային կուլտուրաների զարգացումը, արդյունաբերության զարգացումը Արևելքի յեռամնաց ազգային ռայոններում, պայքարի ուժեղացումը նացիոնալիստական թեքումների և նրանց հանդեպ հաշտվողականության դեմ—ահա 16-րդ համագումարի լոզունգները ազգային քաղաքականության բնագավառում:

Այս լոզունգները վոչ մի սկզբունքային նոր բան չեն բովանդակում կուսակցության ազգային քաղաքականության հարցադրման մեջ: Բայց նորը հանգիսանում է այն կացությունը, վորի ժամանակ համագումարն առաջադրեց այդ լոզունգները—սոցիալիզմի ծավալուն շինարարության կացությունը բաղաֆում և գյուղում, սոցիալիզմի ծավալուն հարձակումը ամբողջ ֆրոնտով: Սա հսկայական չափով հեշտացնում և ապագացնում է մեր ազգային քաղաքականության խնդիրների լուծումը: Ուստի այդ քաղաքականության համար խոշոր նշանակություն ունի համագումարի մի շարք վորոշումները, վորոնք ձեվականորեն չեն վերաբերում ազգային հարցին:

Որինակ համագումարը տվեց հետևյալ դիրեկտիվները.

«Ընդհանուր պարտադիր ուսման կիրառումը և անգրագիտության վերացումը պետք է դառնան կուսակցության մարտական խնդիրը մատակա շրջանում»:

Մեծ պարզ չէ, վոր համագումարի այս վճռի (արդեն կա ՈՄՀՄ կենտգործկոմի և ժողկոմխորհի համապատասխան վորոշումը) վճռական ազդակ կհանդիսանա յեռամնաց ժողովուրդների կուլտուրական մակարդակի բարձրացման գործում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է, վոր ընդհանուր պարտադիր ուսումը կհեշտացնի նաև ազգային ռայոններում ապարատների ազգայնացման, տեղական պրոլետարական կադրերի առաջմման, կոլեկտիվացման հիման վրա գյուղատնտեսության բարձրացման, կրոնական նախապաշարումների դեմ պայքարի ուժեղացման խնդիրների լուծումը:

Համագումարի և կենտկոմի վորոշումները սոցիալիստական շինարարության համար կադրեր պատրաստելու հարցի մասին ուժեղ խթան կհանդիսանան պրոլետարական ակտիվի և ինտելիգենցիայի աճմանը ազգությունների, նույնիսկ ամենայետամնացների մեջ:

Ցուրաքանչյուր նոր հաջողությունը սոցիալիստական շինարարության ֆրոնտում՝ կտանի դեպի նոր նվաճումները ազգային քաղաքականության բնագավառում:

Համագումարը մեծ ուշադրություն դարձրեց նացիոնալիստական թեքումների դեմ մղվող պայքարին: Այս բնագավառում 16-րդ համագումարը ըստ էության հաստատեց այն, ինչ ասվել էր դեռ 12-րդ համագումարում, այն է՝ վոր վելիկոռուսական չովինիզմը գլխավոր վտանգն է: Կուսակցությունը հիմք չունի վերլուծելու իր դիրքն այս հարցում: Ինքըստինքյան հասկանալի է, վոր ուժի մեջ է մնում այն, ինչ ասած ընկ. Ստալինը կուսակցության 12-րդ համագումարում այն մասին, թե ինչպես պետք է կռվել նացիոնալիզմի դեմ;

«Ռուս կոմունիստի պարտականությունն է,— ասաց ընկ. Ստալինը—պայքար մղել ռուսական շովինիզմի դեմ: Եթե ես ռուս, այլ Թուրքեստանցիկամ վրացի կոմունիստները ձեռնարկելին պայքարի ռուսական շովինիզմի դեմ, ապա նրանց այդ տեսակի պայքարը կդնահատվեր որպես հակառուսական շովինիզմ: Սա կխճճեր ամբողջ գործը և կամրապնդեր վելիկոռուսական շովինիզմը»:

Նույն ձեվով ընկ. Ստալինը ընդգծեց վոչ ռուս կոմունիստների պարտականությունը պայքար մղելու իրենց շովինիզմի դեմ.

«Եթե ռուս կոմունիստը իր վրա վերցնի թաթարական կամ վրացական շովինիզմի դեմ պայքարելու ծանր խնդիրը, ապա նրա այդ պայքարը կդնահատվի որպես վելիկոռուսական շովինիզմի պայքար թաթարների կամ վրացիների դեմ»:

Դասակարգային պայքարի սրման զուգընթաց, որպես հետեվանք սոցիալիստական հաղթական հարձակման և դուրս մղվող կապիտալիստական տարրերի դիմադրության, աճում է բուրժուական նացիոնալիստների ակտիվությունը: Դասակարգային թշնամին հանդես է գալիս ազգայնական լոզունգների ծածկոցի տակ պաշտպանելու իր դասակարգային դիրքերը: Նացիոնալիստները յերբեմն հանդես են գալիս բացահայտ հակահեղափոխական ծրագրով: Դրա համար էլ ավելի մեծ պետք է լինի մեր աչալրջությունը, էլ ավելի վճռական պետք է լինի մեր հակահարվածը ամեն տեսակի չովինիստական իդեոլոգիային;

Ամեն դասի բուրժուական նացիոնալիստները դեռևս ավելի և ավելի կորցնում են իրենց հույսերը չահելու աշխատավոր լայն մասսաների համակրանքը: Նվաճումները կուսակցության ազգային քաղաքականության ասպարիզում վերջին տարիներս ուժեղացրին յեղբայրական կապը, Խորհրդային Միության ժողովուրդների միջև: Ազգային հանրապետությունների տնտեսական, քաղաքական և կուլտուրական վերելքը նպաստեց այն կադրերի աճմանը, վորոնք ընդունակ են պատշաճ հակահարված տալ շովինիզմի դավերին: Ազգային հանրապետությունների մեջ արդեն աճել են պրոլետարական կադրերը, այնքան զգալի չափով աճել են կուսակցական կազմակերպությունները իհարկե տեղական ազգություններին: Ուկրաինայում օրինակ 1927 թ. ուկրաինացի կոմունիստների թիվն եր մոտ 85 հազար, իսկ 1930 թ. 131 հազարից ավելի: Նույնպիսի կամ ավելի զգալի աճում կա մյուս ազգությունների մեջ: 1922 թ. կուսակցության մեջ ռուսների տոկոսն եր 72, իսկ 1927 թ. ռուսների տոկոսն իջնում է 64-ի: Սա նշանակում է, վոր կուսակցության վոչ ռուս անդամների թվի աճումն առաջ է անցնում կուսակցության ռուս անդամների թվի աճումից: Բկկ(բ) և Ուկկ(բ) կազմի կեսից ավելին կազմում են բելոռուսներ և ուկրաինացիները: Լավանում է ազգային կուսակազմակերպությունների սոցիալական կազմը (բանվորների և բատրակների թվի աճումը), իսկ ազգային հանրապետությունների ինդուստրացման հետեվանքով հետագայում այդ կազմն էլ ավելի կլավանա: Դրանով կուժեղանա ազգային կուսակցական կազմակերպությունների իդեոլոգիական կայունությունը՝ գանազան թեքումների, այդ թվում և նացիոնալիստական թեքումների դեմ մղված պայքարում:

Ազգային անհավասարության մնացորդները վերացնելու համար մղվող պայքարը և անցյալում կապիտալի կողմից ճնշված ժողովուրդների տնտեսական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու, ազգային կուլտուրաները զարգացնելու աշխատանքը հոջող կընթանան պայմանով վոր վճռական հակահարված տրվի վելիկոռուսական շովինիզմի բոլոր դեղուլթներին: Այդ հակահարվածը կհեշտացնի տեղական շովինիստական տրամադրությունների մերկացումը և հաղթահարումը:

Կուսակցության նման քաղաքականությունը ստեղծել և ստեղծում է ազգամիջյան այն հարաբերությունները, վորոնք հնարավոր են միայն խորհրդային կարգերում և խիստ տարբերվում են բուրժուական կարգերում գոյություն ունեցող ազգամիջյան հարաբերություններից:

«Ներանց, կապիտալիստների մոտ ազգային հարցի սրում և ազգային—ազատագրական շարժման աճում Հնդկաստանում, Ֆիլիպպյան կղզիներում և այլն, վորը վերածվում է ազգային պատերազմի:

Մեզանում, ԽՍՀՄ մեջ, ազգային կեղեքության հիմքերի ամրացում, ապահովված ազգային խաղաղություն և ԽՍՀՄ ժողովուրդների միլիոնավոր մասսաների սերտ համախմբում Խորհրդային իշխանության շուրջը (Ստալին):

ՀՀ Ազգային գրադարան
NL0195161

ԳԻՆԸ 25 ԿՈՊ (8 մ.)

XVI С'ЕЗД ВКП (б)
О НАЦИОНАЛЬНОМ ВОПРОСЕ

Госиздат ССР Армении
Эривань—1931

323.1(47)
С-85